

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՈՒ

ديجيتالو

Հրատարակությունից Գաղթյալի Հ.Բ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



Ohan Janikian

1



2



Ohan Janikian

3

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- 1 ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՅՈՒՄ
- 2 ՀԲԸՄ-ի ՊԱՏՈՒՅ ԱՆԴԱՄԻ
ՎԿԱՅԱԳՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՄ
- 3 ՅԻՇԱՏԱԿԻ ՊՆԱԿԻ ՅԱՆՁՆՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Ալեք Մանուկեան (1901-2011) Ծննդեան 110-ամեակ	1
	Մեծարանքի Ընդունելություն ի Պատիւ Տիար Պերճ Թերզեանի	4
	Տիար Պերճ Թերզեանի Ելոյթը	8
	Եզիպտահայ Նկարիչներ <i>Թրգմ. Ա. Ծ.</i>	9
ԽՄԲԱԳԻՐ Արաքսի Տօվլէթեան	Տոքթ. Սոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամ Կարժանանայ ՀՀ Արտաքին Գործերու Նախարարութեան Մետայլին Եւ Վկայագրին	11
ՓՈԽ ԽՄԲԱԳԻՐ Շաքէ Մարգարեան	ՀԲԸՄ-ի Պուէնտս Այրեւի Մասնաճիւղը Կը Տօնախմբէ Իր Հիմնադրութեան Հարիւրամեակը <i>Թրգմ. Ա. Ծ.</i>	14
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ Պերճ Թերզեան	Անուանի Պատմաբան Ռէյմոն Գերզեան Կը Ստանայ 2010-ի ՀՀ Նախագահական Մրցանակը <i>Թրգմ. Ա. Ծ.</i>	15
ՍՐԲԱԳՐԻՉ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ Անայիս Ճիզմէճեան	Գահիրէի ՀԲԸՄ-ը Կը Գումարէ Իր Ընդհանուր Ժողովը <i>Թրգմ. Ա. Ծ.</i>	16
ԳԵՂԱՍԿՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՌՐՈՒՄ Շահէ Լուսարարեան	Ցեղասպանութեան Նուիրուած Ժապաւեններու Շարք «1.5 Միլիոն + Հրանդ Տիք» <i>Արփի Խաչերեան</i>	17
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՈՒԱԾԸ Գարոլին Հէշէմա Արփի Խաչերեան	Երուսաղէմի Հայ Համայնքին Մասին Վաւերագրական Ժապաւեն Մը <i>Թրգմ. Ա. Ծ.</i>	18
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Nubar Printing House	Տասը Գիրքեր ՀՀ Սփիւռքի Նախարարութենէն <i>Պատրաստեց՝ Շ. Մ.</i>	18
ԹԻ 60 Նոր Շրջան ՅՈՒՄՈՒՐ 2011	Քրիստոնէական Հնագոյն Գիրքեր <i>Պատրաստեց՝ Շ. Մ.</i>	18
	Մարալ Պալաեանի Ուսումնական Պատուաբեր Յաջողութիւնը	19
	Վիպասան Րաֆֆիի Կենսագրութիւնը Անգլերէնով <i>Պատրաստեց՝ Շ. Մ.</i>	19
	Գահիրէի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Աղջիկներու Պասքէթ Պոլի Առաջին Խումբը Պիտի Մասնակցի 2011-2012ի Ֆետերասիոնի Մրցումներուն <i>Սօսի Ներտեսան-Յակոբեան</i>	20
	Գահիրէի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Ամառնային Եղանակի Բացումը	21
	ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Ֆութպոլի Վերթաններու Մասնակցութիւնը ՀԲԸՄ ԱՐԱՐԱՏԻ Կազմակերպած Մրցաշարին <i>Սօսի Ներտեսան-Յակոբեան</i>	22
	Աղէքսանդրիոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Ամառնային Եղանակի Բացումը <i>Սօսի Ներտեսան-Յակոբեան</i>	22
	2011ի Երեւանի Համահայկական Ողիմպիական Խաղերը <i>Սօսի Ներտեսան-Յակոբեան</i>	22
	Մահ՝ Աղէքսանդրահայ Համայնքի Գործօն Անդամներէն Վրէժ Սէֆերեանի	23
	Մահ՝ Աղէքսանդրիոյ ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐ Մարգարանի Սիւներէն Արաքսի Դաւիթեան-Սէֆերեանի	23
	Անդամական	24



ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ (1901-2011)

ԾՆՆԴԵԱՆ 110-ԱՄԵԱԿ



Ազգային մեծագոյն բարերարներէն, իսկական հայ, 36 երկար տարիներ ՅԲԸՄիութեան արժանի նախագահ Ալեք Մանուկեան ծնած է Իզմիրի Քասապա գիւղաքաղաքին մէջ, յարգուած առեւտրականի յարկին տակ: Անդրանիկ զաւակը իր հինգ քոյրերուն ու եղբայրներուն՝ ան կը տիրապետեր հինգ լեզուներու:

Ա. Յամաշխարհային պատերազմին յաջորդող վախի եւ անորոշութեան մթնոլորտէն մղուելով 1920-ին, 19 տարեկանին, կ'անցնի ԱՄՆ եւ կը հաստատուի Պրիմբորթ, Զընէթիքէթ, ուր կ'աշխատի որպէս բանուոր ու հայերէնի գիշերային դասեր կու տայ իր ազգակիցներուն: 1924-ին վերջնականապէս կը հաստատուի Տիթթոյիթ եւ չորս տարի կ'աշխատի պտուտակներ պատրաստող ընկերութեան մը մօտ: Աւելի ուշ Տիթթոյիթի մէջ իրեն կը միանան 1922-ի Իզմիրի աղետէն վերջ Յունաստան ապաստանած ծնողքը, եղբայրներն ու քոյրերը:

1931-ին Ալեք Մանուկեան կ'ամուսնանայ Մարի Թաթեանի հետ, որ իր կեանքի ամբողջ տեւողութեան, մինչեւ իր մահը՝ 1993-ին, խորհրդակիցն ու գործակիցը եղաւ իր ամուսնոյն: Կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Լուիզ եւ Ռիչըրտ:

Պտուտակներու եւ ինքնաշարժի մեքենական կտորներու արտադրութեան մէջ

շահած փորձառութեամբ Ալեք Մանուկեան 1929-ին կը հիմնէ ՄԱՍԶՕ ճարտարարուեստական ընկերութիւնը ու կը սկսի ինքնաշարժի բաղադրամասեր արտադրել: ՄԱՍԶՕ-ի ամենէն յայտնի արտադրութիւնը կ'ըլլայ Delta ծորակը:

Ընկերութիւնը կ'ըլլայ հայու կողմէ հիմնուած առաջինը՝ որ 1936-ին կ'անցնի Տիթթոյիթի սակարանին վրայ, 1973-ին՝ Նիւ Եորքի սակարանին, իսկ այսօր մաս կը կազմէ «Fortune 500» ձեռնարկութիւններուն:

1930-ական թուականներէն ան կ'անդամակցի Վարդանանց Ասպետներու եղբայրակցութեան (Աւագ Սպարապետ 1940-էն) եւ ՅԲԸՄիութեան, որու Կեդրոնական Վարչական Ժողովին անդամ կ'ընտրուի 1943-ին: 1953-ին, նախագահ Արշակ Գարակեօգեանի մահուրնէ ետք, նախագահ կ'ընտրուի Ալեք Մանուկեան, որ իր պաշտօնը ձեռնասօրէն կը վարէ 36 տարի (1970-էն՝ ցկեանս նախագահ): 1989-ին, երբ կը հրաժարի առողջական պատճառներով, Վարչական Ժողովը զինք կ'ընտրէ Յկեանս Պատուակալ Նախագահ: Իր գործօն նախագահութեան ընթացքին Միութեան դրամագլուխը 8 միլիոն տոլարէն կը հասնի 112 միլիոնի:

Եկեղեցին կարելոր դեր խաղացած է Ալեք Մանուկեանի կեանքին մէջ: Ան 12 տա-



րեկանին որպես մոմակալ դպիր առաջին անգամ կը բարձրանար իր ծննդավայրին Ս. Աստուածածին եկեղեցւոյ խորանը, իսկ 1994-ին, Հայաստանեայց եկեղեցւոյ ծառայութեան 80-ամեակին առիթով ան կը յայտարարէր «Առանց եկեղեցիին ու լեզուին չկայ հայութիւն»: 1960-ական թուականներուն ան Տիթրոյիթի համայնքը զօրաշարժի կ'ենթարկէ կառուցելու համար աւանդական ոճով, բայց արդիական շունչով ոսկեգմբէթ Ս. Յովհաննէս նոր եկեղեցին, որ մաս կը կազմէ քաղաքի տեսարժան կոթողներուն: 1970-ական թուականներուն, անլիք քան մէկ միլիոն տոլարի նուիրատուութեամբ կառուցել կու տայ Երուսաղէմի Ալեք եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի շէնքը:

1982-ին կը կատարուի բացումը Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թելադրանքով եւ Ալեք Մանուկեանի նուիրատուութեամբ կառուցուած «Ալեք եւ Մարի Մանուկեան Գանձարան»ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին կից, ուր կը պահպանուին Արեւմտահայաստանի տաճարներէն, եկեղեցիներէն ու մատուռներէն փրկուած առարկաները, որ մինչ այդ կը պահուէին սնտուկներու մէջ: 1994-ին, ընդառաջելով Վազգէն Ա-ի առաջարկին, ան յանձն կ'առնէ անլիք քան հինգ միլիոն տոլար նուիրատուութեամբ մը կառուցել Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը, որու բացումը կատարուեցաւ 2001-ին, տարի որ կը կշէր Հայոց Զրիստոնէութեան ընդունման 1700-ամեակը եւ Ալեք Մանուկեանի ծննդեան 100-ամեակը:

Ան մեծագումար նուիրատուութիւններով սատարած է նաեւ Վենետիկի Միսիթարեաններուն, օժանդակած բազմաթիւ եկեղեցիներու շինարարական եւ այլ ծրագիրներուն, տարեկան յատկացումներ կատարած Կիլիկեան թեմի եկեղեցիներու դպրոցներուն:

Սփիւռքի մէջ հայկական վարժարաններու կարելորութեան հաւատացողը եղաւ Ալեք Մանուկեան: Իր իշխանական բարերարութիւններուն շնորհիւ, Ամերիկաներու եւ Իրանի մէջ հաստատուեցան իր եւ տիկնոջ անունը կրող 6 վարժարաններ, Ամերիկաներու, Լիբանանի, Սիւտիի, Ֆրանսայի

մէջ՝ 12 երիտասարդական կեդրոններ: Իր նուիրատուութիւններով Միշիկընի համալսարանէն ներս հաստատուած են ժամանակակից Հայոց Պատմութեան Ալեք Մանուկեան Ամպիոնը, Հայոց Լեզուի եւ Գրականութեան Մարի Մանուկեան Ամպիոնը, զանազան համալսարաններու մէջ գոյութիւն ունին Հայկական Ուսմանց Յայտագիր:

1968-ին հաստատուած էր ՀԲԸՄիութեան Ալեք եւ Մարի Մանուկեան Մշակութային Հիմնադրամը մէկ միլիոն տոլարի սկզբնական նուիրատուութեամբ, որ հետզհետէ հարստացած էր նոր նուիրատուութիւններով: Անոր նպատակն էր զարկ տալ հայ մշակոյթի զարգացման, սատարելով գրական, գիտական, բանասիրական գործերու հրատարակութեան եւ թարգմանութեան, օգնութեան ձեռք մեկնել հանգստեան կոչուած, կարօտ մտաւորականներու եւ ուսուցիչներու: Իբրեւ երախտագետ քաղաքացին ԱՄՆ-ու, Ալեք Մանուկեան մեծագումար նուիրատուութիւններով սատարած է նաեւ ամերիկեան հիւանդանոցներու, թանգարաններու, գրադարաններու, վարժարաններու, բարեսիրական ու մշակութային հաստատութեանց: Իսկ Տիթրոյիթի իր ապարանքը նուիրած է քաղաքապետութեան՝ իբրեւ պաշտօնական բնակարան քաղաքապետին:

Խորապէս գնահատելով անոր հայրենասիրութիւնը, ղեկավարութիւնն ու ծառայութիւնը, 1994-ի Հոկտեմբերին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան Ալեք Մանուկեանին կը շնորհէր Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն եւ «Ազգային Հերոս»ի կոչում՝ Վազգէն Կաթողիկոսի եւ Վիքթոր Համբարձումեանի կողքին: Առաջին սփիւռքահայն էր ան որ կը պարգեւատրուէր այդ շքանշանով:

1993-ին կը մահանար Մարի Մանուկեան ու 1996-ի Յուլիսին՝ Ալեք Մանուկեան: Իսկ 2007-ի Յուլիս 17-ին, պետական բարձր պատիւներով եւ եկեղեցական ծիսակարգով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հայրենի հողին կը յանձնուէին անոնց աճիւնները իրենց իսկ կառուցած Գանձատան առջէս:

20-րդ դարու, թերեւս բոլոր ժամանակներու, անզուգական հայուն յիշատակը միշտ



ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԵՆ

- Եթե նորեն ծնիմ, պիտի ուզեմ անպայման վերստին հայ ծնիլ:
- Պիտի ջանամ բարձր պաշտօնին արժանի ըլլալ եւ պիտի նուիրուիմ ՀԲԸՄիութեան նպատակներուն աւելի արդիւնաւորման:
- Դեկտ. 12, 1953-էն էր որ իմ սիրոյ ճամբորդութիւնս սկսաւ Բարեգործականին հետ, ան նոյն ուղիէն որ գծած էր սիրեցեալ հիմնադիր նախագահը՝ Պօղոս Նուպար Փաշա: Զեմ կրնար ըսել որ ուղեւորութիւնը փոթորկալից եղաւ, բայց կրնամ հաստատել որ ան լեռն ի վեր մագլցում էր: Ուրախ եմ ատոր համար, որովհետեւ մեր նախագահութեան 36 տարիները առիթ տուին ինծի բարեկամաւնալու ոսկեսիրտ հայերու հետ, որոնք աչքերուս առաջ լայն բացին մեր ազգային ոգեղէն գանձին դռները: Ինչ որ իրենք կամ ես տուինք, նշանակութիւն չունի: Ինչ որ կարելոր է, մենք ու Բարեգործականը եղանք մէկ, եւ միութիւնը մեզ օժտեց հոգեմտաւոր հարստութեամբ:
- Միայն հայ հողին վրայ կերտուածն է որ կը մնայ յաւիտեան, միայն այդ հողին վրայ է որ խաչքարի կողքին կենդանի շունչով կը դօղանջէ հայուն խաչագարդ գմբէթը . . . մեզի համար ալ երազ մը եղած էր միշտ քար մը գետեղելը հայրենիքի կառոյցին վրայ . . . երազ մը, որ մարմին առաւ Վազգէն Վեհափառի շունչով ու անոր անվրիպելի ճաշակով:
- Հայոց եկեղեցին հայ ազգին տունն է ու դպրոցը ամեն հայու:
- Ես կը կարծեմ որ մէկ կաթողիկոսութիւն բաւարար է մեզի համար. աւելի լաւ կ'ըլլար որ մէկ կաթողիկոս ունենայինք, մէկ ըլլար մեր եկեղեցին: Անթիլիասը պահելու պատճառները հաւանաբար կարելոր են, բայց ոչ բաժանեալ եկեղեցի մը ունենալու համար: Պետք չէ ազգը ձեւով մը բաժնել, իրարու հակառակորդ ու մրցակից եկեղեցիներ ունենալ: Անտանելի կացութիւն մըն է ասիկա մեզի համար:
- Մեր վարժարանները եւ մեր կեդրոնները պիտի իրականացնեն մեր բոլորին յոյսերը՝ պատրաստելով ազգասէր հայորդիներու սերունդներ, որոնք պիտի գան հպարտութեամբ ձեռք առնելու ազգապահպանումի դրօշը եւ շարունակելու մեր սերունդներուն սրբազան գործը:
- Բարեգործականի գլխաւոր դրամագլուխը իր վարժարաններուն հունձքն է:
- Բարեգործականը հարուստ կազմակերպութիւն մը չէ, այլ աւանդապահը հարստութեան մը: Եթէ Բարեգործականը խղճմտութեամբ կիրարկած չըլլար իր աւանդապահի դերը՝ պիտի չկրնար արժանանալ իր բարերարներուն ու ժողովրդի վստահութեան:
- Որեւէ կրթական օճախի խափանում ազգային աղետ մըն է մեզի համար, հետեւաբար մեր ցանկութիւնն է որ միշտ բաց մնան դարպասները Մելգոնեանին, որպէսզի ուսման ծարաւի սերունդներ երազներով մտնեն անկէ ներս ու անոր ջահէն վառելով իրենց հոգին՝ դառնան անոր ճշմարիտ առաքեալները:

վառ կը մնայ իր անունը կրող դպրոցներով, կեդրոններով, կառոյցներով եւ Տիթրոյիթի,

Երեւանի, Գիւմրիի, Ստեփանակերտի մեջ՝ պողոտաներով:

Քաղեց՝ Երանուհի Ղազարեան
«ՆՈՐ ԱՇԽԱՐՀ»



ՄԵԾԱՐԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՒՄ Ի ՊԱՏԻ ՏԻԱՐ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆԻ



Աւելի քան 45 տարուան ազգային-եկեղեցական, միութենական եւ հրապարակագրական բազմաբնոյթ բեղուն գործունեութեան մը արդար գնահատանքի տուչութեան էր, որ ներկայ գտնուեցանք ընթացիկ տարուայ Ապրիլ 24-ին, Ս. Յարութեան Տօնի Ս. Պատարագի ընթացքին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիէն ներս:

Ամենայն Հայոց Վեհափառ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը իր յղած Սրբատառ Կոնդակով կը պարգևատրէր Գահիրէի Թեմական Ժողովի անդամ, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ, Գահիրէի ՀԲԸՄ-ի Պատուոյ Ատենապետ Տիար Պերճ Թերզեանը Ս.Սահակ - Ս. Մեսրոպ շքանշանով: Այս պատուաբեր տուչութեան մասին անդրադարձած էինք «Տեղեկատու»ի մեր նախորդ թիւով:

Զուշացաւ նաեւ Տիար Պերճ Թերզեանի ՀԲԸՄիութենէն ներս ունեցած տարիներու ժրաջան, արդիւնաւոր նախաձեռնութիւններով լեցուն գործունեութեան գնահատանքը:

Արդարեւ, 21 Ապրիլ 2011 թուակիր նամակով մը ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան կը տեղեկացներ, թէ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը, նկատի ունենալով Պերճ Թերզեանի ՀԲԸՄ-ի ծիրէն ներս ունեցած երկարամեայ նուիրեալ գործունեութիւնը, որոշած է իբր արժանի վարձատրութիւն անոր շնորհել ՀԲԸՄ-ի «Պատուոյ Անդամ»ի բարձր

տիտղոսը (նամակը տեսնել «Տեղեկատու» ի նախորդ թիւին մէջ, էջ 17):

Այս զոյգ գնահատականներու շնորհումը նշելու եւ շնորհաւորելու համար Կիրակի, 8 Մայիսի երեկոյեան, ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպած էր քոքթէյլ-ընդունելութիւն մը Հելիոպոլսոյ Պըլլըքտանեան Սրահին մէջ:

Պըլլըքտանեան Սրահը «Նոր Տեսք» առած էր, ընդունելու հրաւիրեալներ՝ Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Ս. Եպիսկոպոս Մնացականեանը, Եգիպտոսի հայ Կաթողիկէ համայնքի Վիճակաւոր, Արհիապատիւ Տէր Գրիգոր Ինգնատիոս Գուսանը, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեանը եւ ազնուափայլ Տիկիկը, Գահիրէի Թեմական Ժողովի փոխ ատենապետ Տիար Կարպիս Եազըճեանը, Զաղաքական Ժողովի ատենապետ Տոքթ. Գեորգ Երզընկացեանը եւ ազնուափայլ Տիկիկը, Հոգշ. Գաբրիէլ Աբոյ. Սարգսեանը, Գահիրէի հոգեւոր հովիւ Տէր Յակոբ Քիւյ. Յակոբեանը եւ Գահիրէի հայ համայնքին մէջ գործող զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ մեծարեալին մօտիկ բարեկամները:

ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ Տոքթ. Վ. Ճիգմեճեանի պատշաճ ներածական խօսքէն ետք, Տէր Յակոբ Քիւյ. Յակոբեան կարդաց Վեհափառ Հայրապետին



Սրբատառ Կոնդակը, որմէ ետք Տոքթ. Վ. Ճիզմեճեան ընթերցեց ԶԲԸՄ-ի Նախագահ Պերճ Սեդրակեանի յղած գոյգ Նամակները, որոնցմէ առաջինը՝ ԶԲԸՄ-ի Կ Ե Ղ Ի Ո Ն Ա Կ Ա Ն Վարչական Ժողովին՝ իր ու իր տիկնոջ կողմէ կը շնորհաւորէր Տիար Պերճ Թերզեանը Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Շքանշանին արժանանալուն առիթով, իսկ երկրորդը՝ կը յայտնէր ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովին Տիար Պերճ Թերզեանին ԶԲԸՄ-ի «Պատուոյ Անդամ»ի տիտղոսը շնորհելու որոշումը:

Այս առթիւ ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովին կողմէ դրկուած «ԶԲԸՄ-ի Պատուոյ Անդամ»ի վկայագիրը Տոքթ. Ճիզմեճեան յանձնեց Տիար Թերզեանին:

ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի վարչութիւնը այս մեծարանքի ընդունելութիւնը կազմակերպելէ անկախ, մտածած էր Նաեւ մասնաճիւղին անունով, իր երկար տարիներու անդամ, ատենապետ եւ ապա՝ 2007-ԷՆ Պատուոյ Ատենապետ Տիար Պերճ Թերզեանին նուիրել շնորհաւորական յիշատակի մետաղեայ պնակ մը: Նուէրը մեծարեալին յանձնեց մասնաճիւղի փոխ ատենապետ եւ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամ՝ Տիար Օննիկ Պըլըքտանեան:

Ապա, օրուան առաջին խօսողը՝ Տիար Նորայր Տեովլէթեան, շնորհաւորական կարճ ելոյթ մը ունեցաւ, որպէս մեծարեալին մօտ 50 տարուայ բարեկամն ու հասարակական գործունէութեան լծակիցը:

Յաջորդ խօսք առնողն էր ԶԲ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան, որ իր շնորհաւորանքներուն կողքին, կը փոխանցէր ԶԲ-ի Արտաքին Գործերու Նախարար Տոքթ. Էդուարդ Նալպաստեանի շնորհաւորութիւնը «որ կը ցանկանայ նորանոր յաջողութիւններ եւ ձեռքբերումներ» մեծարեալին գործունէութեան մէջ:

Յաջորդեց ելոյթը եգիպտահայ կաթողիկէ համայնքի Կիճակաւոր Արհիպատիւ Ինգնատիոս Օգոստինոս Եպիսկոպոս Գուսանի, որ անդրադարձաւ Տիար Թերզեանի ունեցած հրապարակագրական գործունէութեան, եւ

այս առթիւ իրեն նուիրեց Աղեքսանդրիոյ Զայ Կաթողիկէ Պատրիարքարանի շքանշանը:

Վերջին խօսք առնողը եղաւ Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Տէր Աշոտ Եպիսկոպոս Մաքսկանեանը, որ իր շնորհաւորական ելոյթին մէջ անդրադարձաւ մեծարեալին գործունէութեան զանազան երեսներուն: (*Յաջորդ էջերուն մէջ կը ներկայացնենք օրուան ելոյթներէն մէջբերումներ*):



Ամպիոնը Տիար Թերզեանին էր: Ան կարդաց իր խօսքը շնորհակալութիւն յայտնելով Ամենայն Զայոց Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոսին, ԶԲԸՄ-ի Նախագահ Պերճ Սեդրակեանի ու Կեդրոնական Վարչութեան անդամներուն, ելոյթ ունեցող հանգամանաւոր անձերուն, բոլոր ներկաներուն ու երեկոն կազմակերպող ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի Վարչութեան (*խօսքը տեսել էջ 8*):

Երեկոն յաջող էր: Պըլըքտանեան Սրահին «Նոր Տեսքը» գեղեցիկ: Կազմակերպութիւններու կողմէ ուղարկուած գունաւոր, աչք շոյող ծաղկեկողովները շարուած էին բեմին եզրին եւ հոս-հոն ճաշակով տեղադրուած բարձր սեղանիկները ազատ շրջելու միջավայր մը ստեղծած էին, մինչ սպասարկուած խմիչքները, համեղ խորտիկներն ու անուշեղէնները կը գոհացնէին քիմքերը:

Եւ ժամանակը կը յառաջանար անսկատ: Ներկաները շնորհաւորական ու շնորհակալական խօսքերով կը մեկնէին սրահէն:

Գնահատանքի արժանի ձեռնարկ մը եւս արձանագրուեցաւ ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի տարեգրութեանց մէջ:

Յիշարժան երկու Կիրակիներ անցան եգիպտահայ գաղութի կեանքէն եւ գացին միանալու անոր պատմութեան էջերուն:

Ծաղկեկողովներ դրկուած էին Գահիրէէն՝ հետեւեալներէն. Ազգային Իշխանութիւն, ԶԲԸՄ, ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ, «Արեւ»ի շրջանակ, Յուսաբեր Մշակութային Ընկերակցութիւն, ԶՄԸՄ Արարատ, Կարիքի Խաչ, Այծեմնիկ Տիկնանց Միութիւն, Անի եւ Ռաֆֆի Պօղոսեան եւ Ռոպեր Թաշճեան: Իսկ շնորհաւորական հեռապատճեն դրկած էր Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐը:

«Տ»



ԳԵՐԱՇՆՈՐԴ ՏԵՐ ԱՇՈՏ ԵՊՍԿ. ՄԱՅԱԿԱՆԵԱՆ



«Ձեզի խոստովանիմ որ շատ կարեւոր շրջանի ճանչցայ զինք: Կարեւոր, ինչո՞ւ համար. որովհետեւ հոգելոյս Չաւէն Սրբազանէն յետոյ, երբ Առաջնորդական Տեղապահ եղայ, յետոյ՝ Առաջնորդ: Այդ օրերուն Զաղաքական Ժողովի ատենապետը Պր. Թերզեանն էր: Եւ Առաջնորդական պաշտօնին դժուար լուծը որ ես պիտի տանէի, այդ ծանր բեռէն բաւականին գործ, ինք իր ուսերուն վրայ առաւ եւ օգտակար եղաւ ինծի:

Կրնայ ըլլալ որ շատերը տեղեակ չեն . . . մէկն էր որ այդ խոնարհութիւնը եւ համեստութիւնը ունէր, որ կը հեռաձայներ, կը հարցներ . . . ամէն ձեռով, թէ՛ իբրեւ բարեկամ, թէ՛ իբրեւ մեծ եղբայր, . . . թէ՛ իբրեւ մտաւորական, ամէն արժանիքներով սատար եղած է թէ ինծի եւ թէ Առաջնորդարանի գործերուն:

Վերջ ի վերջոյ, անդրադարձայ թէ բան մը կը պակսեր գնահատելու համար Պր. Թերզեանը . . . ընդհանրական գնահատական մը որ պետք էր նաեւ իր ծանրակշիռ արժէքը ունենար եւ ատիկա ո՛չ ես կրնայի տալ, ո՛չ ալ ոեւէ մէկը մեր համեստ կարողութիւններով:

Այդ էր պատճառը որ այդ գնահատականը տալու համար, դիմեցինք Վեհափառ Հայրապետին, եւ Վեհափառ Հայրապետը անձամբ ճանչնալով Պր. Թերզեանը եւ տեղեակ ըլլալով անոր գործունէութեանը, սիրով, առանց որեւէ երկմտանքի եւ հարցուփորձի, իր հայրապետական կոնդակով Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Շքանշանը կրելու շնորհը տուաւ Պր. Թերզեանին:

Երկար չեմ ուզեր խօսիլ, արդէն այնքան ներկայացուցին Պր. Թերզեանը եւ կը վախճամ որ մեզի ամենուս կրնայ նորէն քննադատել յօդուածով մը:

Ամփոփելով . . . ես Ձեզի կ'ընդունիմ իբրեւ մտերիմ եւ հարազատ անձ մը եւ պաշտօնական չէ, որ կ'ուզեմ արտայայտել իմ կարծիքս, այնպէս որ պարզապէս կը մաղթեմ Ձեզի ամենակարեւորը՝ առողջութիւն եւ այդ սրամտութիւնը որ ունիք, որ ոչ միայն բանաւոր կ'արտայայտէք, այլ նաեւ գրաւոր՝ . . . թող ծառայէ ի շահ մեր գաղութին, մեր ազգին, մեր պատմութեանը եւ ողջ հայութեանը:

Խօսքս կ'ուղղեմ ամենուդ. գիտեմ որ ամէնքդ ալ շնորհներ ունիք. ձեր շնորհները գործածեցէք ազգին համար, գաղութին համար, մարդկութեան համար: Ամէնքդ ալ ունիք այդ շնորհը եւ եթէ ոչ հայրապետական կոնդակով, այլ ընդհանրապէս նոյնիսկ մէկ շնորհակալական խօսքով պիտի գոհացած ըլլաք . . . :

Ձեզ նորանոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք»:

ԱՐԴԻԱՊԱՏԻ ԻՆՉԵԱՏԻՈՍ ՕԳՈՍԻՆՈՍ ԵՊՍԿ. ԳՈՒՍԱՆ

«Մենք եթէ այստեղ հաւաքուած ենք այս ուրախ առիթով որ Ամենայն Հայոց Հայրապետը Ձեր կրծքին շքանշան դրաւ, ասիկա բոլորիս պատիւ կը բերէ:

Ես ուրախ եմ որ այսօր Ձեզի հետ եմ . . . Ձեր վարձքը կատար ամէն բանի համար որ ըրած էք . . . հայութեան համար . . . : . . . Ձեր գիրքն ալ որ վերջերս լոյս տեսաւ արաբերէն լեզուով, գրեթէ բոլորին բաժնեցի եւ կրնամ խոնարհաբար ըսել, թէ այդ գիրքին Ձեր դեսպանը եղայ, որպէսզի տամ ամէն մարդու, Ազգարէն սկսեալ, քաղաքապետէն մինչեւ նախագահական պալատ եւ ուրիշներու:

Եգիպտոսի հայութիւնը պետք ունի Ձեզի . . . Ձեր յաջորդներուն: . . . Մենք քիչ ենք, բայց մենք պիտի շարունակենք մեր գործը ու պիտի ճանչցնենք թէ ով է հայը եւ ինչ կ'ընէ:

Ձեր վարձքը կատար Պր. Պերճ, կը շնորհաւորենք Ձեզ, Ձեր Ազնուափայլ Տիկինը եւ Ձեր բարեկամները:

Մենք իրարու մօտ ենք, մենք մէկ ենք եւ ձեռք ձեռքի տուած պիտի շարունակենք . . . ծառայել մեր ժողովուրդին թէ՛ Եգիպտոս եւ թէ՛ ի սփիւռս աշխարհի»:





ՏՈՔԹԱՐՄԵՆ ՄԵԼԵՈՆԵԱՆ

«Ես կ'ուզեմայի . . . առանձնացնել իր գործունեության մեջ 3 ուղղություններ . . . ինքը բազմաբրոֆիլ անձնաւորութիւն է, իր գործունեութիւնը չունի սահմաններ, ոչ աշխարհագրական, ոչ էլ ոլորտների առումով, այսինքն տարածուն է, ամենուր եւ ամեն տեղ:



Կ'ուզեի առանձնացնել նրա գրական մեծ գործունեութիւնը եւ ինձ համար պատիւ է ասել, որ դեսպանութիւնը վերջերս կազմակերպեց Պերճ Թերզեանի գրքի շնորհանդէսը:

Յաջորդը, դա ՅԲԸՄ-ի «Արեգ» ամսագիրն է որ ես կ'ուզեմայի նշել: Դա շատ կարեւոր նախաձեռնութիւն է, որ Պր. Թերզեանը ամբողջովին լծուած է այդ գործին, որովհետեւ ոչ միայն ծանօթացնում է հայութեանը եւ հայ կեանքին եգիպտացիներին եւ արաբական երկրներում բնակող արաբներին . . . այդ ամսագիրը կարողանում է իր շուրջը համախմբել եգիպտացիներ, որոնք հետաքրքրուած են հայութեամբ, Յայաստանով եւ հայագիտութեամբ . . . :

Եւ երրորդը կ'ուզեմայի նշել նրա գործունեութիւնը Յայաստանի Դեսպանութեան համար . . . որի համար մենք շատ շնորհակալ ենք . . . Տարիներ շարունակ, սկսած դեսպանութեան հիմնադրման առաջին օրուանից, նա որպէս նուիրեալ լծուած է եղել Դեսպանութեանը օգտակար լինելու աշխատանքին . . . Նրա թիկունք լինելը մենք միշտ զգացել ենք անցեալ տարիներին եւ այսօր էլ զգում ենք, յանձինս Պր. Պերճ Թերզեանին մեր կողքին ունենք բարեկամի՝ բառի բուն իմաստով . . . :

Այսպիսի օրով խօսելով հարկաւոր է յիշել որոշ յատկանիշներ որ ես տպաւորուած եմ Պր. Թերզեանից: Այդ դրական յատկանիշները, որոնք ինք ունի բազմազան են: Անոր համար ես առանձնացրել եմ դրանցից միայն երեքը . . . : Առաջինը՝ դա արդարամտութիւնն է . . . , կարող ենք ասել անսակարգ արդարամտութիւն, որ անգամ չի խնայում իր սեփական անձը:

Երկրորդը՝ . . . նրա սրամտութիւնն ու հումորը, հումորի լուրջ զգացումը, որը երբեմն կարող է անհամատեղելի թուալ իր սովորաբար խոժոռ կեցուածքի հետ: Բայց սա այդպէս է, երբ կարդում էք իր գրուածքները, զգում էք ինչ սուր եւ ինչ շինիչ գրիչ ունի, եւ որքան խորն է . . . :

Երրորդը՝ բժախնդրութիւնը . . . ոչ միայն շրջապատի, այլ իր անձի նկատմամբ: Նրա համար չկայ աչկապութիւն, չկայ կիսատ-պռատ գործ, չկայ ի միջի այլոց գործ: Եթէ մի բան անում է՝ անում է մանրագնիկ:

Կրկին շնորհաւորում եմ Ձեզ եւ Տիկին Սեդային, ցանկանում եմ նորանոր յաջողութիւններ»:

ՏԻՄՈՒՆ ԼՈՐԱՅՐ ՏԵՕՎԼԵԹԵԱՆ



«Սիրելի Պերճ, մեր գաղութին, հայ ժողովուրդին ու Յայ Դատին համար տարած քու յարատեւ, բժախնդիր ու լաւագոյնին հասնելու անշահախնդիր գործունեութեանդ համար, արժանի դարձար այս շքանշանին, որուն համար Արաքսին ու ես կը շնորհաւորենք քեզ եւ Սեդան, որուն ունեցած սերն ու հաւատքը քեզի ու հայ ժողովուրդին հանդէպ, զօրավիգ եղան հայու պարտքը կատարելու յանուն մեր ժողովուրդին ու եկեղեցիին:»



ՏԻԱՐ ՊԵՐՆ ԹԵՐԶԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Սիրելի ներկաներ

Գահիրեի Բարեգործականին կազմակերպած այսօրուան ձեռնարկը յարմարագոյն առիթը կ'ընծայէ հրապարակաւ իմ որդիական շնորհակալութիւններս յայտնելու Ամենայն Յայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ ընդառաջելով եգիպտահայ թեմի բարեխնամ Առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի խնդրանքին, Սրբատառ Կոնդակով ծառայականս արժանացուցած է Ս. Սահակ - Ս. Մեսրոպ շքանշանին:

Նոյնպէս, այս առիթով կը փափաքիմ իմ հրապարակային շնորհակալութիւնս յայտնել Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահ Տիար Պերն Սեդրակեանին եւ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին անդամներուն, նախ՝ հայրապետական տուչութեան համար իրենց ուղարկած շնորհաւորական գիրին եւ յետոյ ԶԲԸՄ-ի Պատուոյ Անդամի տիտղոսը շնորհելուն եւ համապատասխան վկայագիր առաքելուն առիթներով:

Ներքին խոր համոզում մը ունիմ, որ այս գոյգ զնահատականները, ձեռով մը կը տարածուին նաեւ բոլոր անոնց վրայ, որոնց հետ առիթը ունեցած եմ տասնամեակներ շարունակ սերտօրէն գործակցելու եւ որոնց զօրավիգին եւ վստահութեան շնորհիւ է որ կարելի եղած է իմ համեստ բաժինս բերել մեր համայնքին համար տարուած գործունեութեան մէջ:

Անցեալի բազմաթիւ գործակիցներ, որոնցմէ շատերը պիտի ուզէի որ հոս ներկայ ըլլային այսօր, չկան այլեւս: Անոնց թարմագոյն օրինակը Գահիրեի պատկառելի Թեմական ժողովի երկարամեայ բարեյիշատակ ատենապետ Անդրանիկ Մեսրոպեանն է, որուն քառասունքին ներկայ եղանք այս առաւօտ: Վստահ եմ որ ան եթէ այժմ մեր մէջ գտնուէր, իր ջերմ խնդակցութիւնները պիտի յայտնէր:

Ազգային կեանքի մէջ ունեցած առաջին քայլերէս միշտ հաւատացող եղած եմ հաւաքական աշխատանքի: Հաւաքական աշխատանք իրարու պէս մտածող եւ իրարու պէս չմտածող անհատներու եւ կազմակերպութիւններու միջեւ:

Մեր ազգային խնդիրները տեղական եւ համահայկական մակարդակներով այնքան բազմազան են եւ դժուար, որ բոլորիս հաւաքական ճիգերու մէկտեղումով, հագիւ թէ կարելի ըլլայ դիմակալել մեր առջեւ ծառայող դժուարութիւնները: Հատուածական եւ անձնական նեղ ու շիւ հաշիւներէ հեռու, անկեղծ եւ փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած նպատակասլաց գործակցութիւնն է, որ միայն կրնայ յաջողցնել մեր հաւաքական իղձերուն իրագործումը:

Կ'ուզէի Ձեզ մասնակից դարձնել զիս յուզող մտորումի մը: Հաւանաբար նկատեցիք թէ Վեհափառ Յայրապետին Սրբատառ Կոնդակը տրուած է

անցեալ Զոկտեմբերին, սակայն որոշ շրջան մը երկրիս մէջ տիրող կացութեան եւ կարգ մը այլ հանգամանքներու բերումով, Առաջնորդ Սրբազան Յայրը տուչութեան արարողութիւնը կատարեց Ս. Չատկի օրը, որ այս տարի խորհրդանշանականօրէն կը զուգահիսէր Ապրիլ 24-ին:

Ոմանք թերեւս մտովի առարկեն, թէ արդեօք յարմար էր Ապրիլ 24-ի օրով շքանշանի տուչութիւն կատարելը: Սակայն, եթէ հաշուի առնենք Յայրապետական Կոնդակին թուած գործունեութեան մարզերը, պիտի նկատուի թէ անոնք բոլորն ալ հայօրէն գոյատեւելու եւ 1915 Ապրիլ 24-ին մեր ժողովուրդին հասած ահաւոր պատուհասին հետեւանքները դարմանելու եւ բառնալու միջոցներ են:

Մեր նախնիները Սփիւռքի մէջ հայօրէն գոյատեւելու համար հիմնած են հայկական եկեղեցիներ ու վարժարաններ, հայկական մշակութային օճախներ ու մարզարաններ եւ հայկական մամուլ:

Այս բոլորին ընդհանրական նպատակը բնականաբար նոյնն է, հայկականութեան պահպանումը: Մեր եկեղեցին եթէ դառնայ զուտ կրօնական կառոյց եւ դադրի կրօնականին զուգահեռ իր ազգային առաքելութիւնը կատարելէ, եթէ հայկական վարժարանը վերածուի լոկ ուսումնական վկայականներու պատրաստող հաստատութեան, առանց ջամբելու ազգային տոհմիկ դաստիարակութիւն, եթէ մեր մշակութային օճախները դադրին կանոնաւոր մշակութային գործունեութիւն ունենալէ եւ վերածուին ժամանցի եւ ճաշկերոյթի կեդրոններու, եթէ մեր մարզարանները տարուին միայն մարզական յարթանակներ արձանագրելու խօլ արշաւով, առանց ազգային ոգի տալու մարզիկներուն, եթէ մեր մամուլը վերածուի լոկ լրատուական միջոցի, առանց տեղական ազգային հարցերու մասին սեփական քննարկումներ կատարելու, զնահատելով կամ պարսաւելով բարի կամ յոռի գործունեութիւնները, մեր յիշած բոլոր կառոյցները հեռացած կ'ըլլան իրենց գոյութեան նպատակէն:

Հոս հաւանաբար անհրաժեշտ է յիշեցնել թէ իւրաքանչիւր հայ անհատ, իր կարողութեան ներած չափով, պարտի իր աջակցութիւնը եւ ներդրումը բերել, իր ընտանիքէն վերջ, իր անմիջական շրջապատին, իր պատկանած համայնքին, եկեղեցիին, ժողովուրդին եւ հայրենիքին:

Այս վերաբերմունքը պէտք է գայ բոլորէն՝ մեծէն թէ փոքրէն, որովհետեւ ամէն ոք, որքան ալ համեստ ըլլան իր կարելիութիւնները, անպայման բան մը ունի տալիք իր պատկանած հաւաքականութեան եւ իր ուրոյն տեղը ունի անոր մէջ:

Կ'ուզէի անելցնել նաեւ, թէ շքանշանին տուչութիւնը կամ պատուոյ անդամի վկայականը, վերջապէտ մը չեմ նկատեր իմ գործունեութեանս, այլ նոր սկիզբ մը առաւել թափով շարունակելու ազգային ծառայութիւնս, անշուշտ եթէ Աստուած կամենայ



ԵԳԻՊՏԱՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ

2010-ին Գահիրեի Ամերիկեան Համալսարանի հրատարակչատունեն անգլերենով լոյս տեսաւ «20-րդ Դարու Եգիպտական Արուեստ» խորագրով Շերուէթ Շաֆէիի նկարներու անձնական հաւաքածոյին մասին գունատիպ հատորը, տպուած 216 մեծադիր էջերու վրայ: Սոյն հատորին տպագրութիւնը իրագործուած է Չինաստանի մէջ:

Հատորին համադրողն է Սոնա Ապագա, որ գրած է գիրքին յառաջաբանը, օգտուելով նաեւ հաւաքածոյին տիրոջ Շերուէթ Շաֆէիի նօթերէն:

Հատորին ընդարձակ յառաջաբանին մէջ «Եգիպտահայ Գաղութ» խորագրով յատուկ բաժին մը յատկացուած է եգիպտահայ նկարիչներուն:

Ստորեւ՝ այդ բաժնին թարգմանութիւնը:

« S »

Էմէ Ազար իր հրատարակած գիրքին մէջ, ամբողջ բաժին մը յատկացուցած է եգիպտահայոց, որուն մէջ կ'ընդունի թէ կարելի չէ անտեսել հայ նկարիչներու ունեցած ազդեցութիւնը եգիպտական արուեստին վրայ: Մինչ եգիպտացի նկարիչներու նոր սերունդը հրապուրուած է արտայայտչական ոճով, եգիպտահայ նկարիչները տարբեր հետաքրքրութիւններ ունին և մասնաւորաբար զօրաւոր փափաք՝ պահպանելու իրենց ավանդութիւնները: Թէեւ իբր անհատներ անոնք ունեցած են տարբեր նկարագրեր և գեղարուեստական արտայայտութիւններ, սակայն Ազար կը շեշտէ անոնց ունեցած կապակցութիւնը՝ հայկական հին մանրանկարչութեան և հայկական զարդարուեստի վարպետներուն հետ: Սակայն անոնք բոլորը միացած են մտահոգութեան զօրաւոր զգացումով մը, ինչ որ հասկնալի է երբ նկատի առնուի փոքրամասնութեան մը պատկանելու իրենց կարգավիճակը: Ազար կը շեշտէ որ հայ ուշագրաւ նկարիչներու մեծամասնութիւնը, ինչպէս Աշոտ Չօրեան, Բիւզանդ Կոճամանեան և Արթէ Թօփալեան մաս կը կազմեն եգիպտական արուեստին, տրուած ըլլալով որ անոնց գործերուն մեծամասնութիւնը կը ներկայացնէ տեղական նիւթեր, որոնց շնորհիւ անոնք մեծ ազդեցութիւն ունեցած



ԵՐՈՒԱՆԴ ՏԵՄԻՐՃԵԱՆ - Գեղջկուհին

են եգիպտացի նոր սերունդի նկարիչներուն վրայ:

Օրինակի համար, երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխան հիմնած էր իր սեփա-



կան դպրոցը և ունեցած՝ բազմաթիւ հետեւորդներ, որոնք կը ջանային մրցիլ հետը: Սարուխան ստեղծած էր «Masri Effendi»-ի երգիծաքաղաքական կերպարը՝ նշանաւոր իր բարձրորակ հեգնական և քննադատական ոճով, ինչպէս նաև ուրիշ հարիւրաւոր երգիծանկարչական կերպարներ, որոնք կ'արտայայտէին խոնարի դասակարգի զգացումները: Իր երգիծանկարները յաճախ կը ներկայացնէին եգիպտահայ գաղութը:

Հայ արուեստագետներէն շատեր ցաւալի փորձառութիւններ ունեցած են՝ տեղահանութեան, գաղթի և աքսորի: Անոնցմէ մէկն է պոլսահայ Երուանդ Տէմիրճեանը: Հրանդ Բէշիշեան զայն կը ներկայացնէ իբրեւ «Արդի Եգիպտոսի առաջին արհեստավարժ նկարիչը»: Ան ականատես եղած է 1895-ի համիտեան ջարդին, ստիպուած է հեռանալ Պոլիսէն և Աղեքսանդրիա հասած՝ 1896-ին, շատ ցաւալի պայմաններու տակ, որոնք մինչեւ իր կեանքին վախճանը խոր ազդեցութիւն թողած են իր հոգեկան աշխարհին վրայ: Չայն կը նկարագրեն որպէս երկչոտ, մեկուսացած, ազնուական անձ մը: Ըստ Բէշիշեանի «Իր նկարները լաւատեսութիւն չեն արտայայտեր, այլ՝ լեցուն են սիրով և համակրանքով խոնարի մարդոց հանդէպ»: Պոլսոյ Գեղարուեստից Վարժարանը ավարտելէ յետոյ, 1893-ին ան մեկնած է Փարիզ և յաճախած՝ «Academie Julian» Ակադեմիան, ուսուցիչ ունենալով Jean Paul Laurens-ը և արելելագետ նկարիչ՝ Jean-Joseph Benjamin Constant-ը: Ան «Louvre»-ի մէջ, ընդօրինակութիւններ կատարած է «Delacroix»-ի դասական գործերէն:

Երբ Եգիպտոս ժամանեց, ան մէկն էր այն երկու հազար գաղթականներէն, որոնք կեղեքուած, հարստահարուած, թշուառ կեանք մը կը վարէին: Սակայն Տէմիրճեան շուտով մուտք գործեց արուեստի ասպարէզ և իր գործերը ցուցադրեց «Cercle artistique»-ի մէջ, ուր 1891-էն ի վեր տարեկան ցուցահանդէսներ կը կազմակերպուէին: Ան դասախօսած է նաև ֆրանսական բազմաթիւ կեդրոններու մէջ և նկարչութեան ուսուցիչ եղած՝ Խորէնեան Վարժարանի: Իր աշակերտներէն՝ Տիրան Կարապետեան

(1882-1963) պիտի դառնար յաջորդ սերունդի ամենաազդեցիկ նկարիչներէն մին:

Տէմիրճեան ձգած է բազմաթիւ ուրուանդկարներ (sketches), որոնք յաճախ կը ներկայացնեն ամենօրեայ տեսարաններ համեստ դասակարգի մարդոց կեանքէն: Ան կարողացած է հասարակ գահիրեցիին կեանքին խորքը թափանցել, տրուած ըլլալով որ կը բնակէր Մոհամետ-Ալի բազմամարդ փողոցի տուններէն մէկուն տանիքին վրայ գտնուող սենեակի մը մէջ:

Իր ուրուանկարները և իւղանկարները ընդհանրապէս կը ներկայացնեն շուկաներ, նեղ ծառուղիներ, փողոցի վաճառորդներ, Ազհարի ուսանողներ, մուրացկաններ, գնչուներ, պարուհիներ, բեռնակիրներ, մէկ խօսքով երկրին հասարակ մարդիկը: Ուշագրաւ են անոնց դէմքի արտայայտութիւններն ու մարմնի դիրքերը, որոնք հարազատօրէն կը ցոլացնեն եգիպտական կեանքին առօրեան և մշակոյթը:

Տէմիրճեան համբաւի տիրացաւ Եգիպտոսի արտաքին գործոց նախարար՝ Տիգրան Փաշա Ապրոյեանի (1891-1894) իր գծած մեծադիր իւղանկարին շնորհիւ: Տիգրան Փաշան եւս հայկական ծագում ուներ և նեցուկ կանգնած էր Եգիպտոս ապաստանած հազարաւոր հայ գաղթականներուն: Ուստի, Տէմիրճեանի այդ նկարը երախտագիտական դոյզն մէկ արտայայտութիւնն էր, հայ համայնքին հանդէպ անոր ցուցաբերած օժանդակութեան համար:

Տէմիրճեանի յանձնարարուած էր նաև ընդօրինակութիւններ կատարել իտալական վերածնունդի վարպետներու կրօնական իւղանկարներէ, որոնք ցարդ տեղ կը գրաւէն Ռամսէս պողոտայի Հայ Առաքելական Եկեղեցիին մէջ: Այսուհանդերձ շատ մը ուրիշ արուեստագետներու նման, Տէմիրճեան աղքատ էր, երբ մահացաւ Փարիզ 1938-ին, յետ անողոք հիւանդութեան: Թէև մեծ համբաւի տիրացած էր, սակայն քիչ թիւով նկարներ ծախած էր ցուցահանդէսներու ընթացքին: Չէր ամուսնացած և ժառանգորդ ալ չուներ, այնպէս որ իր գործերը անցած են պետութեան գանձատան և ծախուած աճուրդով: Չանոնք գնած է եգիպտահայ գոհարավաճառ Պերճ Յովակիմեան:



Վերակենդանացնելու համար Տեմիր-ճեանի յիշատակը և նշելու՝ անոր Գահիրե ժամանման հարիւրամեակը (1896), «Shafei» գործակցութեամբ ԶԲԸՄ-ի, ցուցահանդես մը կազմակերպած էր «Safarkhan» ցուցասրահին մէջ, որ մեծ յաջողութիւն արձանագրած էր. այս ալ, ըստ «Shafei»ի, յարգանքի այլ տուրք մըն էր մատուցուած մեծ նկարչին: Նշենք, որ այս առթիւ ԶԲԸՄ-ի մեկենասութեամբ գիրք մը հրատարակուած էր:

Համբար Համբարձումեան այլ ուշագրաւ նկարիչ մըն է, որուն անունը յիշուած է «Shafei»ի ժողովածոյին մէջ: Ծնած Աղէքսանդրիա 1911ին, ան երեք տարի յաճախած է «Լեոնարտո Տա Վինչի» արուեստից վարժարանը և աւարտած՝ 1928ին: Ան՝ առաջին անգամ իր գործերը ցուցադրած է 1939ին «Salon de l'Atelier»ի մէջ, իսկ անկէ յետոյ՝ կանոնաւորաբար թե՛ Գահիրեի և թե՛ Աղէքսանդրիոյ մէջ: Ան անհատական ցուցահանդեսներ տուած է նաև Իտալիոյ մէջ, 1949 և 1952 թուականներուն: Համբարձումեան ծանօթ էր իր թախճոտ իւղանկարներով, որոնք յաճախ կը ներկայացնէին աղքատ թաղերու նեղ փողոցներն ու հին տուները:

1945ին, եգիպտահայ նկարիչներու մէկ կարեւոր ցուցահանդեսին առթիւ, ֆրանսական «La Semaine Egyptienne» պարբերաթերթը բացառիկ թիւ մը հրատարակեց «Stravo Stavrinou»ի գլխաւորութեամբ: Ներածականին մէջ Օննիկ Աւետիսեան ընդհանուր ակնարկ մը կը նետէր հայկական նկարչութեան պատմութեան վրայ, իսկ մնացեալը յատկացուած էր ցուցադրուած գործերուն ներկայացման և անոնց նկարիչներուն կենսագրութեան: Վերոյիշեալ ցուցահանդեսին մասնակցած էին հետեւեալ նկարիչները. այրերէն՝ Տիրան Կարապետեան, Օննիկ Աւետիսեան, Աշոտ Չօրեան, Բիւզանդ Կոճամանեան, Գրիգոր Մկրտիչեան, Վահան Յովիւեան, Համբար Համբարձումեան, Սիմոն Սամսոնեան, Յակոբ Յակոբեան, Տիգրան Անդրանիկեան և Հրանդ Անդրանիկեան: Իսկ կիներէն՝ Արթէ Թօփալեան, Սաթենիկ Չազըր, Յասմիկ Պալլարեան, Նորա Իփէքեան, Անահիտ Շամլեան, Անահիտ Արթինեան և Հերմինէ Բարսեղ-



ԱՆՆԱ ՊՕՂԻԿԵԱՆ - ԷԼ Ֆիշաուի Սրճարանը

եան: Կային նաև երկու երգիծանկարիչներ՝ Ալէքսանդր Սարուխան և Էսմոն Զիրազ:

Ցուցահանդեսը տեղի ունեցած է Գահիրեի «Societe Orientale De Publicite»ի ցուցասրահին մէջ, իսկ բացումը կատարած է կրթական նախարար՝ Ապտէլ Բազզաք Ահմետ Էլ-Սանհուրի Պէյը:

Եգիպտահայ արուեստագետ համայնքին հանդէպ հետաքրքրութիւնը վերակենդանացած էր և սկսած՝ ուշադրութիւնը գրաւել պաշտօնական շրջանակներու: Նոյեմբեր 2009-ին, ԶԲԸՄը Օփերայի «Hanager» կեդրոնին աջակցութեամբ, կազմակերպեց ցուցահանդես մը, որուն բացումը կատարեց մշակոյթի նախարար՝ Ֆարուք Հոսնի: Ցուցահանդեսը նուիրուած էր Բիւզանդ Կոճամանեանի ծննդեան հարիւրամեակին, սակայն ցուցադրուեցան նաև երեսուներեք այլ արուեստագետներու՝ մօտ հարիւր գործեր, բոլորն ալ 20-րդ դարու սկիզբի կամ կիսուն նկարիչներ: Ուրեմն, Կոճամանեանի կողքին կային նաեւ Երուանդ Տեմիրճեանի, Վահրամ Մանապեանի, Տիրան Կարապետեանի, Ալէքսանդր Սարուխանի, Աշոտ Չօրեանի, Վահան Յովիւեանի, Օննիկ Աւետիսեանի, Արթէ Թօփալեանի, Համբար Համբարձումեանի, Սիմոն Շահրիկեանի, Ժիրայր Փալամուտեանի, Ճոն Բաբազեանի, Սիմոն Սամսոնեանի, Ռոզ Բաբազեանի, և Էլիզ Փարթամի գործերէն նմոյշներ:

Ցուցահանդեսը պարփակած էր նաև ժամանակակից նկարիչներու գործեր. Յովհաննէս Տնկճեան, Արմենուհի Ժամկոչեան, Նորա Իփէքեան, Մարկրիթ Պալթայեան, Հրանդ Զէշիշեան, Շանթ Աւետիսեան, Վահէ



Վարժապետեան, Սարգիս Թօսունեան, Ալին Ճիգմեճեան, Մարի Արթինեան, Վահան Դելփեան, Արմեն Յակոբ և Գեղամ Ճղալեան: Այս առթիւ ԶԲԸՄը հրատարակեց գրքոյկ մը, որուն մէջ ներկայացուած էին վերոյիշեալ արուեստագետներու մօտ վեց հարիւր գործեր:

Եգիպտահայերը շարունակած են միշտ գլխաւոր տարրերը հանդիսանալ արուեստի մարզէն ներս: Աննա Պօղիկեան, մէկն է որ սքանչելիօրէն իւրացուցած է Գահիրէի ոգին և գայն ցոլացուցած իր նկարներուն ընդմէջէն: Ինչ որ կը յատկանշէ Պօղիկեանը այն է, թէ ինք կարողացած է հարազատօրէն թափանցել փողոցի հասարակ և կենսունակ կեանքին: Անոր նկարած ոլոր-մոլոր նեղ փողոցները, խճողուած հանրակառքերը, սրճարանները, շոգեկառքի կայարանները հրապուրիչ են և երգիծանքով լի: Ան կախարդանքով կը նկարէ կենսունակ քաղաքին փառաւորութիւնը՝ քառսի և անկումի մէջ: Իր իսկ խօսքերով. «Groppi-ի տեսարանը՝ չքաւոր դարձած ազնուականներ են, տիկիները, որոնց դէմքերը սպիտակով շպարուած են, ճաքոնական թատրոնի դիմակներուն նման, մեծարգոյ պարոններու ապակիէ աչքերու և սառած արտայայտութիւններով՝ ժամանակը կանգ առած է»:

Յարատել ճամբորդ մը ըլլալուն, Պօղիկեան բազմաթիւ երկիրներու իր փորձառութիւնները ներմուծած է իր արուեստին մէջ: Ազդուած ըլլալով շրջապատին ձգած տպաւորութենէն, ան Գահիրէի կեդրոնին, Աթապայի, գետեզերքի, Ռամեսի հրապարակին, շոգեկառքի կայարանին, Զելիոպոլսոյ, Զասր Էլ Այնիի, բուրգերուն և այլ հարիւրաւոր ուրուագծեր գծած է: Իր ճամբորդութիւններուն և թափառումներուն ընթացքին, ան երկար ժամանակ ապրած է «Sufi Lodge»ի մէջ և ներշնչուած՝ «Sufi»-ներու պարի շարժումներէն և վերացական աշխարհէն: Գահիրէի Ամերիկեան Զամալսարանի նախկին շէնքին բարեգարդման ժամանակ, ան ներդրած է խորհրդանշական դէմքերու, ինչպէս Նակիպ Մահֆուզի, Սաատ Չաղլուլի, Թահա Զիւսէյնի նկարները: Զնդկաստանի իր ճամբորդութիւններէն յառաջ եկած են հմայիչ գործեր, որոնք կը պատկերացնեն բորոտներու համայնքներ,

մուրացկաններ, լքեալներ, կարօտեալներ, յուզիչ և միանգամայն գունագեղ, գուարթեղանակով մը: Չարմանալի չէ որ «Shafei» նուագագոյնը տասը ցուցահանդէսներ կազմակերպած է Պօղիկեանի գործերուն նուիրուած, ներառեալ Զնդկաստանիները, որոնք այնքան յաջողութիւն գտած են, որ անոնցմէ շատերը առաջին օրն իսկ ծախուած են:

Շանթ Աւետիսեան եւս եգիպտահայ ծանօթ արուեստագետ մըն է: Ան ալ ճամբորդող մը եղած է, սակայն իր հետաքրքրութիւնը ուղղուած է դէպի Ճայրագոյն Արեւելք, իր հորիզոնը ընդարձակելով մինչեւ Չինաստան, Մոնկոլիա և Ուլան-Պաթօր, ներշնչուելով առաւելաբար չինական գեղագրութենէն: Ան անուանի դարձած է, տրուած ըլլալով որ բազմաթիւ տարիներ աշխատած է ճարտարագետ Զասան Ֆաթհիի հետ իբր անոր լուսանկարիչը: Ան ծանօթ է նաև 1940-ական և 1950-ական թուականներու եգիպտացի շարժանկարի աստղերու իր իղանկարներով:

Աւետիսեան մէկն է այն սակաւաթիւ եգիպտացի արուեստագետներէն, որոնց անունը կը գտնուի «Christie's Dubai Catalog»ին մէջ:

Աւետիսեան և Պօղիկեան օրինակներ են այն բացայայտ կապակցութեան, որ գոյութիւն ունի արուեստին և փոքրամասնութեան մը պատկանելուն միջև. փոքրամասնութիւն մը՝ որ ենթարկուած է տեղահանութեան արհաւիրքին, զրկանքներուն և այսօր կ'ապրի ի սփիւռս աշխարհի՝ կարօտովը իր կորսուած հողին: Զակառակ որ հինէն հաստատուած են Եգիպտոս և չեն նկատուած որպէս զուտ եգիպտացիներ, այս երկու արուեստագետները իրենք զիրենք կը նկատեն որպէս եգիպտացի և արուեստի տիեզերական լեզուով կ'արտայայտեն շատ մը տեղական գաղափարներ, պատկերներ: Անոնք իրենց նուրբ զգայնութեամբ խորը թափանցած են եգիպտական ժողովրդային մշակոյթին ամենահմայիչ տարրերուն: Իրենց ընկերային հետաքրքրութիւնը և սերը հանդէպ համեստ դասակարգերու մշակոյթին, կը մնան հասարակ յայտարարները իրենց՝ և Տեմիրճեանի նման նախորդ սերունդի նկարիչներուն միջև:

Թրգմ. Անայիս Ճիգմեճեան



ՏՈՒՔԹ. ՄՈՂԱՄԷՏ ՌԻՖԱԱԹ ԷԼ ԻՄԱՄ ԿԱՐԺԱՆԱՆԱՅ Հ Հ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԷՏԱՅԼԻՆ ԵՒ ՎԿԱՅԱԳՐԻՆ

Կիրակի, 17 Յուլիս 2011ին, երեկոյեան ժամը 8.00-ին ՀՀ Արտակարգ Եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան, Դեսպանատան գեղատեսիլ Եւ լուսագարդուած պարտեզին մէջ, հրաւիրած էր եգիպտահայ գաղութի ներկայացուցչական դէմքեր, գլխաւորութեամբ Եգիպտահայ թեմի բարեխնամ Առաջնորդ Տ. Աշոտ Եպսկ. Մաքականեանի, ինչպէս նաեւ եգիպտական համալսարաններու դասախօսներ, գրողներ, լրագրողներ Եւ զանգուածային լրատուամիջոցներու թղթակիցներ:

Առիթը՝ պաշտօնական իրադրութեան մէջ եգիպտացի պատմաբան Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամի ՀՀ արտաքին գործերու նախարարութեան շքանշանին Եւ վկայագրին յանձնումին համար կազմակերպուած քոքթէյլ-ընդունելութիւնն էր:

Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան ելոյթ ունենալով վեր առաւ Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթի հայ-եգիպտական յարաբերութիւններու ծիրէն ներս ունեցած նշանակալից դերը: Ապա ՀՀ արտաքին գործերու նախարար Տոքթ. Էդուարդ Նալպաստեանի անունով մեծարեալին յանձնեց արտաքին գործերու նախարարութեան մետալը Եւ համապատասխան վկայագիրը, որպէս գնահատանք հայ մշակոյթը Եւ պատմութիւնը արաբական աշխարհին ծանօթացնելու գծով, իր ունեցած նշանակալից ներ-



դրումին:

Ապա խօսք առաւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Տիար Պերճ Թերզեան, որպէս օրուան մեծարեալին երկար տարիներու գործակիցը տարբեր ծրագիրներու իրագործման մէջ:

Ան ներկայացուց մեծարեալին գործունեութիւնը, որպէս պատմագետ, դասախօս, լրագրող Եւ հեղինակ ու թուեց այդ հանգամանքներով անոր տարած գործունեութեան արգասիքները:

Նոյնպէս խօսք առին մեծարեալին ուսանողներէն յետ-աւարտական մակարդակով հայկական ուսումնասիրութիւններու հետեւող Ալի Սապէթ Եւ Սուէզի Ջրանցքի համալսարանի Իսլամական Ռեսուրսասիրութիւններու ուսուցիչ Տոքթ. Նասեր Մահմուտ Ուահտան, որ նոյն ատեն հայերէնի ուսանող Է Գահիրէի Համալսարանի Հայագիտական Կեդրոնին մէջ:

Ապա շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթ:

Ներկաները Դեսպանատան ճոխ հիւրասիրութիւնը վայելելուն առընթեր, առիթը ունեցան լայն փոխ ծանօթացումի Եւ յառաջիկայ գործունեութիւններու մասին գաղափարներու փոխանակումի:

« S »





ՀԱՐՄ-Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԸ ԿԸ ՏՕՆԱԽՄԱՔԷ ԻՐ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Շաբաթ, 14 Մայիս 2011ին, մօտ 500 հոգի հաւաքուած էին Պուէնոս Այրեսի ՅԲԸՄԻ կեդրոնի Նազարեան հանդիսասարահը, տօնախմբելու համար ՅԲԸՄԻ Պուէնոս Այրեսի Մասնաճիւղի հիմնադրութեան հարիւրամեակը: Երեկոյթը կը վայելէր բարձր հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսին, որ այդ շրջանին հովուապետական այցելութեամբ կը գտնուէր Յարաւային Ամերիկա:

Երեկոյթին հանդիսավարն էր Պուէնոս Այրեսի Մարի Մանուկեան Յիմնարկի հայկական բաժնի վարիչ եւ ուսուցչուհի Ռոզիթա Եուսուֆեան: Պուէնոս Այրեսի Մասնաճիւղի ատենապետ եւ ՅԲԸՄԻ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Ռուբէն Քէշիշեան, Նախ բարի գալուստ մաղթեց Նորին Սրբութեան եւ բոլոր ներկաներուն, ապա հակիրճ կերպով ներկայացուց կազմակերպութեան կատարած բարենպատակ, օգտաշատ գործունէութիւնները ի նպաստ ազգին եւ եկեղեցիին, շեշտելով որ Միութեան հիմնադրութենէն ի վեր, այդ ուղղութեամբ աշխատած են ՅԲԸՄ-ի իրերայաջորդ բոլոր վարչութիւնները եւ անաչառօրէն կատարած՝ իրենց վստահուած առաքելութիւնը: Արժանիքնի Պուէնոս Այրեսի Մասնաճիւղը հիմնուած է Նախքան 1915ի Մեծ Եղեռնը եւ մինչեւ այսօր 100 տարիներ շարունակ, ան անխափան ծառայած է հայ ժողովուրդին: Քէշիշեան ըսաւ. «Բառերը անբաւարար են արտայայտելու համար մեր հիացմունքն ու գնահատանքը հանդէպ հիմնադիրներուն, իրերայաջորդ ատենապետներուն եւ վարչութիւններուն: Իրապէս, անոնք կարողացան լաւագոյն կերպով մեկնաբանել Պօղոս Նուպարի պատգամը եւ Պուէնոս Այրեսի Մասնաճիւղը դարձնել ամենաաշխոյժ եւ ամենակորովի մասնաճիւղերէն մին»:

Երեկոյթին ընթացքին եղան բազմաթիւ ուղերձներ: Ի միջի այլոց, խօսք առին Նաեւ Արժանիքնի մօտ Յայաստանի դեսպանը՝ Վլատիմիր Կարմիրշալեան եւ ՅԲԸՄԻ փոխնախագահ Սինան Սինանեան, որ ներկանե-

րուն փոխանցեց ՅԲԸՄԻ ղեկավարութեան պատգամը: «Պուէնոս Այրեսի ՅԲԸՄԻ Մասնաճիւղը, իր աշխոյժ, այլազան գործունէութեամբ եւ Մարի Մանուկեան Յիմնարկով, պատանիներն ու երիտասարդները կը համախմբէ երեց անդամներուն շուրջ եւ այսպիսով՝ բնականօրէն կ'ապահովէ սերունդներու յաջորդականութիւնը եւ միանգամայն կենսունակ կը պահէ կազմակերպութիւնը», - ըսաւ Սինանեան, ապա յարեց. «Այժմ, աւելի քան 30 տարիներէ ի վեր, ամէն տարի կանոնաւորապէս, միասնական ջանքերով, Յայաստան կ'այցելեն Մարի Մանուկեան Յիմնարկի յաջորդական շրջանաւարտ դասարանները: Անոնք կը ծանօթանան իրենց հայրենիքին եւ ապրելով այդ հայաշունչ միջավայրին մէջ, իրենց մէջ առաւել եւս կ'ամրապնդուի իրենց ստացած հայկական կրթութիւնը»:

ՅԲԸՄԻ Նախագահ Պերճ Սեդրակեան իր յատուկ պատգամով, ՅԲԸՄԻ խոր յարգանքն ու երախտագիտութիւնը կը յայտնէր Ամենայն Յայոց Կաթողիկոսին, որ «Իր ներկայութեամբ եւ հանդիսութեան մասնակցելով կ'ոգեւորէ մեզ եւ առաւել եւս կը քաջալերէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՅԲԸՄԻ միջեւ գոյութիւն ունեցող անքակտելի կապերը»: Սեդրակեանի պատգամը կը յայտնէր Նաեւ անոր խոր համոզումը թէ Պուէնոս Այրեսի Մասնաճիւղը միշտ առոյգ պիտի մնայ եւ շարունակէ օգտակար ըլլալ եւ իր ծառայութիւնները մատուցանել յաջորդող սերունդներուն եւս:

Վեհափառ Յայրապետը իր խօսքին մէջ, իր գնահատանքը յայտնեց ՅԲԸՄԻն, շեշտելով անոր անգնահատելի ներկայութիւնը աշխարհացրիւ հայութեան կեանքին մէջ, ապա Մայր Աթոռի երախտագիտական ջերմ զգացումները արտայայտեց՝ աշխարհի հայկական բարեսիրական այս ամենամեծ կազմակերպութեան որ միշտ նեցուկ կը կանգնի Սուրբ Էջմիածնի եւ կ'օժանդակէ անոր բոլոր ծրագրերուն: «Մեր փափաքն է, - ըսաւ ան, - որ ՅԲԸՄԻ Պուէնոս Այրեսի Մասնաճիւղի հարիւրամեակի արժանավայել այս նշումը,



ԱՆՈՒԱՆԻ ՊԱՏՄԱՔԱՆ ՌԷՅՄՈՆ ԳԷՈՐԳԵԱՆ ԿՐ ՍՏԱՆԱՅ 2010-Ի «ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ»

30 Մայիս 2011-ին, անուանի պատմաբան Ռեյմոն Գեորգեան պարգևատրուեցաւ ՀՀ 2010-ի Նախագահական Մրցանակով, արարողութեան մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Երեւանի նախագահական Պալատին մէջ:

Գեորգեան, ցեղասպանութեան աշխարհահռչակ մասնագէտ Տոքթ. Իսրայէլ Չարնի-ի հետ պատուուեցաւ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման իր բերած ներդրումին համար:

Փարիզի Համալսարանի Աշխարհագրաքաղաքական Ֆրանսական Հիմնարկի դասախօս եւ ՀԲԸՄ-ի Փարիզի Նուպարեան Մատենադարանի տնօրէն Ռեյմոն Գեորգեան, իր «Հայկական Յեղասպանութիւնը: Համապարփակ Պատմութիւն» գիրքով, կուտար հեղինակաւոր տեղեկատուութիւն Հայկական Յեղասպանութեան ծագումին, իրադարձութիւններուն եւ հետեւանքներուն մասին:

Սոյն աշխատասիրութիւնը եւրոպական ակադեմական շրջանակներու կողմէ ողջունեցաւ որպէս նոր մեկնաբանութիւն հայթայթող ուսումնասիրութիւն մը, Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ նախապէս չուսումնասիրուած բազմաթիւ աղբիւրներու:

Հատորին մէջ, Գեորգեան նկատել կուտայ Հայկական Յեղասպանութեան խաղացած դերը, թրքական ազգային պետութեան եւ թրքական ինքնութեան կազմակերպման մէջ, ինչպէս նաեւ կը քննարկէ ուժի, իշխանութեան եւ պետական բռնակալութեան գաղափարաբանութիւնները: Միաժամանակ ան կ'ուսումնասիրէ Հայոց դէմ կատարուած բարբարոսութիւններուն հետեւանքները, տեղահանութիւններու ազդեցութիւնները, ինչպէս նաեւ այդ վայրագութիւնները գործողները արդարադատութեան յանձնելու ճիգերը:

Վերջերս, հատորը անգլերէն թարգմանութեամբ լոյս տեսնելուն առիթով, հեղինակը ձեռնարկեց շրջապտոյտի մը դէպի Հիւսիսային Ամերիկա: Ան Մայիս 3-էն 13, յաջորդաբար այցելեց Թորոնթօ, Մոնթրէալ, Լոս Անձելոս, Սիլիքոն Յովիտ, Տիթոնիթ, Նիւ-Եորք եւ իւրաքանչիւրին մէջ դասախօսութիւններ տուաւ՝ հայերէնով, ծանօթացնելու համար իր հեղինակած հատորը: Այս շրջագայութեանց ընթացքին, ակելի քան 600 հոգի ներկայ եղած են իր բանախօսութիւններուն:

Թրգմ. Ա. Ճ.

խթան հանդիսանայ նոր ներշնչումներու, որպէսզի կարենաք՝ նոյն սիրով, նուիրումով եւ եռանդով շարունակել ձեր օժանդակութիւնը բերել արժանաւոր համայնքին եւ իրագործէք մեր ժողովուրդին իղձերն ու ակնկալութիւնները»:

Իր խօսքին աւարտին, Վեհափառ Հայրապետը շքանշաններով պարգևատրեց Ռոզիթա Եուսուֆեանը, Տոքթ. Ռոպերթօ Մալխասեանը եւ երկարամեայ վարչական Յարութիւն Սարաֆեանը՝ առ ի գնահատութիւն իրենց մատուցած բոլորանուէր ծառայութիւններուն:

Հարիւրամեակի հանդիսութեան ընթացքին, ցուցադրուեցան նաեւ տեղեկատուական երկու տեսերիզներ, մին՝ Մարի Մա-

նուկեան Հիմնարկին գործունեութեանց մասին, իսկ միւսը՝ յետադարձ պատմական ակնարկ մըն էր վարժարանին հիմնադրութենէն մինչեւ ներկայ օրերը:

Նախքան երեկոյթին աւարտը, Անթոնիօ Սարաֆեան Նորին Սրբութեան նուիրեց ՀԲԸՄ-ի հարիւրամեակին առիթով Արժանութիւնի պաշտօնական թղթատարական ծառայութեան կողմէ շրջաբերութեան հանուած առաջին նամականիշերէն մին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի փակման խօսքով եւ օրհնութեամբ վերջ գտաւ այս փառաշուք հանդիսութիւնը:

Թրգմ. Ա. Ճ.



ԳԱՀԻՐԷԻ ՀՐԸՄ-Ը ԿԸ ԳՈՒՄԱՐԷ ԻՐ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Չորեքշաբթի 25 Մայիս 2011ին, Գահիրեի ՀԲԸՄը գումարեց իր տարեկան ընդհանուր ժողովը, Հելիոպոլսոյ Չագըր Մշակութային Կեդրոնին մեջ, ներկայացնելու եւ վաւերացնելու համար 2010 թուականի իր բարոյական եւ սիրական գործունեութեան տեղեկագրերը, ինչպէս նաեւ ընդհանուր ժողովին հաւանութիւնը առնելու 2011ի նախահաշիւ պիւտճէին համար:

Ժողովը սկսաւ նախորդ ընդհանուր ժողովի նիստի ատենագրութեան ընթերցումով եւ ապա կարդացուեցաւ ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի 2010ի գործունեութեան տեղեկագիրը:

Այս առիթով, ՀԲԸՄի Գահիրեի Մասնաճիւղի ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան յայտարարեց թէ 2010ին, Գահիրեի ՀԲԸՄի Չագըր Հիմնադրամը, իր ծրագիրներուն իրագործման համար ծախսած է 1.474.470 Ե.Ո. հետեւեալ գլխաւոր նպատակներուն համար. 371.126. Ե.Ո. ծախսուած է մշակութային ծրագրերու եւ ձեռնարկներու (ի միջի այլոց. «Արեգ» արաբերէն պարբերականին, «Տեղեկատու» պաշտօնաթերթին, Եգիպտոսի ՀԲԸՄի կայքէջին, «Ծիածան» մանկական երգչախումբին, Գահիրեի ՀԲԸՄի հարիւրամեակի հանդիսութեան, թատերական եւ շարժանկարահանումի արուեստներու աշխատանքային ծրագրին, Ժորժ Գազազեանի նուագահանդեսին, Հալէպի ԻԵԸԻ «Անդրանիկ» պարախումբին եւ Սիտնիի ՀԲԸՄի Գահիրեի ներկայացումներուն, Վրէժ Քասունիի եւ Հրաչ Արպաշի ծրագրերուն, հայ նկարիչներուն եւ Հրանդ Քէշիշեանի ցուցահանդեսներուն եւ այլն): Վերոյիշեալ գումարը կը պարփակէ նաեւ ուսումնասիրական ծրագրերու պատուագիւտները եւ թոշակները, ինչպէս «Հայաստան եւ Հայերը Եգիպտական Մամուլին Մէջ» հրատարակչական ծաւալուն ծրագիրը եւ վերջապէս մասնաւոր յատկացումներ այն մասնագետներուն, որոնք ի նպաստ հայութեան ուսումնասիրութիւններ կը կատարեն:

2010ին, 337.779 Ե.Ո. ծախսուած է 62 անհատներու ընկերային օժանդակութեան եւ դարմանումին համար: 103.425 Ե.Ո. ծախսուած է որպէս կրթական օժանդակութիւն 31 ուսանողներու: 9000 Ե.Ո. հանգըստեան կոչուած հայերէնի ուսուցիչներու եւ 200.704 Ե.Ո. իբր նիւթական օժանդակութիւն գանազան հայկական կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու:

401.703 Ե.Ո. ծախսուած է բժշկական խնամքի ծրագրին (Medicare), որմէ կ'օգտուին 334 հայրենակիցներ եւ 36.732 Ե.Ո., երիտասարդական ծրագրերու եւ բանակումներու:

Յետոյ ներկայացուեցաւ 2011ի նախահաշիւ պիւտճէն որ վաւերացուեցաւ ընդհանուր ժողովին կողմէ: Յաջորդ շրջանին համար, ՀԲԸՄի Գահիրեի Մասնաճիւղի վարչութեան կազմը մնաց անփոփոխ, վիճակով դադրած երկու վարչականներու վերընտրութեամբ, ի բացակայութեան այլ թեկնածուներու:

Թրգմ. Ա. Ճ.

ՏԻՍՐ ՊԵՐՃ ԹԵՐՁԵԱՆԻ ԽՕՍՔԸ

շար. էջ 8-Էւ

եւ եթէ գործակիցներս համոզուած ըլլան որ տակաւին տալիք ունիմ:

Սրտագին մաղթանքս է որ ազգային ոգին գոյատեւէ Եգիպտահայութեան մէջ, վերանորոգուի սերունդէ սերունդ եւ մեր բոլոր գործունեութիւններուն գլխաւոր մտասէւեռումը դառնայ:

Կը մաղթեմ նաեւ, որ հին ու նոր սերունդներուն պատկանող շատ ուրիշներ եւս իրենց ազգային գործունեութեան համար արժանանան հայրապետական կամ այլ գնահատանքներու:

Վերջացնելէ առաջ կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել բոլոր խօսք առնողներուն եւ Ձեզ բոլորիդ որ եկաք Ձեր ներկայութեամբ պատուելու այս ձեռնարկը:

Նոյնպէս, մասնաւոր շնորհակալութիւն Գահիրեի Բարեգործականի ատենապետ Տոքթ. Վիգէն Ճիգմէճեանին, ինչպէս նաեւ վարչութեան բոլոր անդամներուն եւ օժանդակներուն, որոնք միասնաբար կազմակերպեցին այսօրուան ընդունելութիւնը:

Շնորհակալութիւն Ձեր ուշադրութեան համար:



Ցեղասպանության Նուիրուած Ժապաւեններու Շարք

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 96 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ «1.5 ՄԻԼԻՈՆ + ՀՐԱՆՂ ՏԻՆՔ»

Շարքին վերջին ժապաւենը ցուցադրուեցաւ Շաբաթ 14 Մայիսին: Ժապաւենը հայերէնով էր և երկու մասէ կը բաղկանար: Առաջին մասը նուիրուած էր Զրանդ Տիկի յիշատակին և կը կոչուէր «1.5 Միլիոն + Զրանդ Տիկի»: Իսկ երկրորդ մասը՝ «Սիրիր Կամ Զեռացիր», գաղափար մը կու տար ներկայ ժամանակներու պոլսահայերու մասին: Ինչպէս բոլորս գիտենք Զրանդ Տիկի ճանչցուած լրագրող մըն էր: Ան «Ակօս» թերթի հիմնադիրն ու խբագիրն էր մինչև իր սպանութիւնը ծայրայեղականի մը կողմէ Յունուար 19, 2007-ին:

Ժապաւենը կը ներկայացնէր Տիկի կեանքը և գործունէութիւնը Թուրքիոյ մէջ: Տիկի կը հաւատար, թէ եթէ Թուրքիա իսկական ժողովրդավարական պետութիւն դառնայ, ինքնաբերաբար պիտի ընդունի Զայոց Ցեղասպանութիւնը: Տիկի կը ջանար երկխօսութեան միջոցներ գտնել հայերու և թուրքերու միջև:

Պատմութիւնը պիտի յիշէ Տիկի իբր Զայ Դատի պաշտպան, որուն համար գոհուեցաւ: Նոյն ատեն ան պիտի յիշուի որպէս Թուրքիոյ ազգային հերոս, որ պայքարեցաւ ժողովրդավարական և մարդասէր Թուրքիա մը ստեղծելու յոյսով:

Այս ժապաւենին մասին հանրութեան տեղեկութիւններ տուաւ Արփի Խաչերեան: Իսկ երեկոն հետաքրքրական անդրադարձներով փակեց Պր. Պերճ Թերզեան:

Արփի Խաչերեան

ԳԱՀԻՐԷԻ ՀՐԸՄ-Ը ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԱՍԻՆ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱԷՆ ՄԸ

Շարունակելով սփիւռքահայ զանազան գաղութներու ներկայացման շարքը, Շաբաթ 25 Յունիս 2011ին, երեկոյեան ժամը 8.30ին, Զելիոպոլսոյ ԶԲԸՄԻ Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ, ցուցադրուեցաւ խիստ հետաքրքրաշարժ վաւերագրական ժապաւեն մը, հայերէնով, Երուսաղէմի շարունակաբար նօսրացող հայ համայնքին մասին:

50 վայրկեան տեւող վաւերագրական այս ժապաւենը լոյս կը սփռէր Երուսաղէմի հայկական թաղամասին եւ աշխարհի ամենահիններէն մին համարուող (1600 տարեկան) հայ գաղութին մասին, որ աշխարհի երկրորդն է իր պահպանած հայկական ձեռագրերու ճոխ հաւաքածոյով: Ժապաւենը կ'անդրադառնար Երուսաղէմի հայ համայնքին նօսրացման պատճառներուն, (1948ի տուեալներով 35.000, իսկ այժմ հազիւ 3000), ապա բացատրութիւններ կու տար իսրաէլեան իշխանութեան եւ հայոց միջեւ տիրող լարուած յարաբերութեանց մասին: Շրջագայութիւն մը կատարելով, ժապաւենը ցոյց տուաւ Երուսաղէմի հայկական եկեղեցիները, ինչպէս նաեւ սրբատեղիներուն մէջի հայապատկան մասերը եւ վերջապէս ներկայացուց կալուածներու եւ ինքքերու կապակցութեամբ հայոց դիմագրաւած այժմու կնճռոտ հարցերը:

Նախքան այս խիստ հետաքրքրական ժապաւենին ցուցադրութիւնը, Տոքթ. Անի Օհաննէսեան տեղեկութիւններ տուաւ անոր մասին:

Թրգմ. Ա. Ճ



ՏԱՍԸ ԳԻՐ-ՔԵՐ ՀՀ ՍՓԻՒՌ-ՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՆԷՆ

ՀՀ Սփիւռքի Նախարարութեան նախաձեռնութեամբ եւ պատուէրով 2010-11-ի ընթացքին հրատարակուեցան տասը գիրքեր, որոնց շնորհանդէսը տեղի ունեցաւ 3 Յունիսին:

Շնորհանդէսի ընթացքին ներկայացուեցան Սփիւռքի հայկական համայնքներու, Սփիւռքի գրական ու լեզուաբանական ժառանգութեան եւ արտասահմանի մէջ գտնուող հայկական պատմա-մշակութային ժառանգութեան իրաւական կարգավիճակին վերաբերեալ գիտական աշխատանքներ:

Հրատարակուած գիրքերն են՝ «Հայ Համայնքների Ինքնակազմակերպման Հարցերը՝ Հարաւային Ռուսաստանի Մէջ», «Յետ Խորհրդային Երկիրների Հայկական Համայնքների Ինքնութեան Խնդիրները եւ Տեղեկատուական Ռեսուրսները», «Ռուսաստանի Հայկական Սփիւռքի Մասին», «Հայկական Համայնքները՝ Խորհրդային Հանրապետութիւններում», «Հայկական Համայնքները՝ Ամերիկայի Մէջ», «Արտերկրում Գտնուող Հայկական Պատմա-Մշակութային



յին ժառանգութեան իրաւական կարգավիճակը», «Գրական Սփիւռք» տարեգիրքը, «Արեւմտահայերէնի Քերականութեան Գործնական Աշխատանքների Ձեռնարկ», «Ռուբէն Սեւակի Հատընտիր» բանաստեղծութիւններու ժողովածուն եւ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններու խտասալիկը:

Շնորհանդէսին ներկայ էր Ռուբէն Սեւակի զարմիկ Յովհաննէս Չիլինկիրեանի ներկայացուցիչը (դատեր ամուսինը)՝ Յակոբ Աւագեան:

Պատրաստեց՝ Ը. Մ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԳԻՐ-ՔԵՐ

Յորդանանի հիւսիսային շրջաններէն քարանձաւի մը մէջ, 2005-2007-ին յայտնաբերուած է քրիստոնէական հնագոյն ձեռագրեր:

Յայտնի չէ պատճառը, թէ ինչո՞ւ հանրութիւնը մինչեւ այսօր չէ տեղեկացուած այդ յայտնաբերութեան մասին:

Հաւաքածոն, որ կը ներառնէ 70 ձեռագիր գիրքեր, կը թըլագրուի Ք.Ե. առաջին դարով եւ կը նկատուի ցարդ յայտնաբերուած քրիստոնէական հնագոյն կարեւոր մատուցը:

Դրամատնային բացիկի (քարտի) չափեր ունեցող կապարէ թիթեղները՝ գիտնական-



ներու ենթադրութիւններուն համաձայն, կը ներկայացնեն «Յայտնութեան Գիրք»-ը:

Ձեռագրերը գրուած են հիէրոկլիֆներով: Վերծանուած մասերուն մէջ կը պատմուի մեսիայի՝ Յիսուս Քրիստոս, Անոր խաչելութեան եւ համբարձման մասին:

Մասնագետներու կարծիքով, գտածոն կրնայ հիմնովին փոխել աստուածաշնչեան պատմութիւնը: Ըստ անոնց, այս մատուցը վկայութիւն մըն է քրիստոնէութեան ոչ-հրեական ծագումին մասին:

Պատրաստեց՝ Ը. Մ.



ՄԱՐԱԼ ՊԱԼԱՆԵԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՐԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Պատուաբեր յաջողութեան մը մասին եւս արձանագրել «Տեղեկատու» ին մէջ ուրախութիւն եւ հպարտութիւն է մեզի համար:

Մեզ ուրախացնողն է Մարալ Պալաւեանը, դուստրը՝ ԶԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի երկարամեայ ատենադպիր Տիար Մարտիկ Պալաւեանի, որ 2011-ին Պոստոնի համալսարանի Graduate School of Arts & Sciences բաժինը գերազանց յիշատակութեամբ ավարտելով, արժանացած է Միջազգային Յարաբերութիւններու եւ Միջազգային Հաղորդակցութեան ճիւղին մէջ մագիստրոսի աստիճանին:

Մարալին ավարտաճառը՝ «Sectarian Conflict: The Struggle of the Egyptian Orthodox Copts as dhimmi, millet and minority in an Islamic Nation».

Մարալ իր համալսարանական ուսու-



մը ստացած է Գահիրէի «MIU-Misr International University»-ի մէջ եւ մասնագիտացած՝ հաղորդակցութեան եւ լրագրութեան մէջ, իսկ տարրական եւ երկրորդական ուսումը՝ Նուպարեան Ազգային Վարժարանի մէջ:

Ան եղած է ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթպոլի աղջկանց առաջին խումբի մարզիկուհի, մինչեւ իր արտասահման մեկնիլը ուսումը շարունակելու:

Ջերմապէս կը շնորհաւորենք Մարալը, մաղթելով որ իր ձեռք ձգած այս յաջողութիւնը ըլլայ շարունակական:

Այս առթիւ կը շնորհաւորենք նաեւ Մարալին հայրը՝ Տիար Մարտիկ Պալաւեանը, եղբայրը՝ Ժիրայրը ու մեծ մայրերը՝ Տիկին Անոյշ Պալաւեանը եւ Տիկին Չարուհի Չօրայեանը:

«Տ»

ՎԻՊԱՍԱՆ ԲԱՅՑԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼՆԵՐԷՆՈՎ

Հայ մեծանուն վիպասան եւ հասարակական գործիչ Յակոբ Մելիք Յակոբեանի (Բաֆֆի) կենսագրութիւնը հրատարակուեցաւ անգլերէնով:

«Մարգարէն Փայաճուկէն» խորագիրը կրող կենսագրական գիրքը Իլինոյի (ԱՄՆ) մէջ կազմած եւ հրատարակած է վեթերան լրագրող եւ տարրաբան Մուրատ Մենէշեան:

Այս գիրքին մասին «Արմինիլըն Միրըր Սփէքթէյթըր»-ի մէջ գրախօսական մը գրած է Ժոզեֆ Տաղտիկեան:

«Մենէշեան հսկայական աշխատանք տարած է ուսումնասիրելով մեծանուն գրողին կենսագրական մանրամասնութիւնները, իր յարաբերութիւնները ընտանիքի անդամներուն եւ այլ գրողներու ու մտաւորա-

կաններու հետ, որոնց կարգին իւրայատուկ տեղ ունի Խրիմեան Հայրիկ: Գիրքը ոգեշնչող է եւ տեղեկատուական հարուստ տուեալներ կը բովանդակէ», - կը գրէ Տաղտիկեան:

Տաղտիկեան հրաշալի գործ կը նկատէ այս կենսագրական թարգմանութիւնը եւ միաժամանակ կը տեղեկացնէ որ Բաֆֆիի գործերէն արդէն անգլերէնով հրատարակուած են «Խենթը», «Ձալալէտտին» եւ «Տաճկահայքը»:

Տաղտիկեան կը տեղեկացնէ նաեւ, թէ վերոնշեալ հրատարակութիւնները կը վաճառուին հայկական գրախանութներու մէջ:

Պատրաստեց՝ Ը. Մ.



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՊԱՍՔԷԹ ՊՈԼԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲԸ ՊԵՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԳԱՀԻՐԷԻ ԵՒ ԿԻՋԷԻ ԱԿՈՒՄԲԵՐՈՒՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ 2011-2012-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ



Հակառակ որ, 2003-2007ի իրերայաջորդ տարիներուն խումբը իր մասնակցութիւնը բերած է տոյն մրցումներուն, սակայն ատկէ ի վեր, քանի մը լաւ խաղացող մարզիկուհիներու խումբէն հեռանալուն պատճառով, անոր մակարդակն ու թիւը անյարմար եղան այս տեսակ լուրջ մրցումներու մասնակցելու ու պատուաբեր արդիւնքներ արձանագրելու:

Երբ պատանի ու անփորձ մարզիկուհիներ եկան միանալու խումբին, հարկ եղաւ մի քանի տարուայ պատրաստական ու լուրջ աշխատանքի, խումբը կրկին ոտքի կանգնեցնելու համար:

Տրուած ըլլալով որ բացի Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ հայկական ուրիշ ոչ մէկ մարզական ակումբ, ըլլայ Գահիրէի թէ Աղեքսանդրիոյ մէջ, չունի աղջիկներու պասքէթ պոլի կանոնաւոր խումբ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը զրկուած է հայկական միջակումբային մրցաշարքերու մասնակցելէ: Շաբաթը երկու անգամ կանոնաւոր փորձեր ընել առանց առիթը ունենալու մրցումներու ժամանակ իրենց պասքէթ պոլի հմտութիւնները գործադրելու, սկսաւ աղջիկները ձանձրացնել ու անոնց խանդավառութիւնը նուազեցնել:

Ուստի, զանոնք խրախուսելու միտումով, խումբին պատասխանատու Սօսի Ներետեան-Յակոբեան, մարզիչ քաբթէն Աալա Չահրան և օգնական մարզիչ քաբթէն Մակետ, որոշեցին այս տարուայ ֆետերասիոնի մրցումներուն մասնակցիլ:

Ըստ պասքէթ պոլի ֆետերասիոնի կանոնագրին, իւրաքանչիւր ակումբ պարտի ունե-

նալ mini-basketի և 14 տարեկանէն վար մարզիկներու արձանագրուած խումբեր, որպէսզի իրաւունք ունենայ տղոց կամ աղջիկներու առաջին խումբեր արձանագրելու: Այս պայմանը մտահոգիչ չէ Գահիրէի և Կիզէի ակումբներուն համար, որոնք ամէն տարիքի հարիւրաւոր մարզիկներ ունին: Սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ համար մեծ խոչընդոտ մըն է, որ կը ջլատէ մարզիկներուն ու պատասխանատուներուն տարած աշխատանքը: Բարեբախտաբար ֆետերասիոնի պատասխանատուները Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ զերծ կը պահեն այս պայմանէն և կ'արտօսեն որ որեւէ տարիքի խումբ մը կամ խումբեր արձանագրուին, այսպիսով առիթ տալով և քաջալերելով, որ անոնք մասնակցին տեղական մրցաշարքերուն:

Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու առաջին խումբը կը բաղկանայ 14-25 տարեկան 12 մարզիկուհիներէ՝ Սեւան Վարժապետեան, Նայիրի Յակոբեան, Թինա Մազլումեան, Ալին Եուսրի, Ալիսա Տեփոյեան, Նանար Գալընեան, Շուշան Թելլալեան, Ռոզանա Լաուէնտի, Ասփէ Ճիզմեճեան, Մարինա Սիմոնեան, Քաթրին Իրատեան ու տարիներու փորձառութիւն ունեցող մարզիկուհի Մարլօ Սիմոնեան:

Կը շնորհաւորենք խումբին պատասխանատուները այս խանդավառիչ նախաձեռնութեան համար և յաջողութիւն կը մաղթենք, վստահ ըլլալով որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները իրենց ցուցաբերած լաւ խաղարկութեամբ ակումբին անունը բարձր պիտի պահեն:

Սօսի Ներետեան-Յակոբեան



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅՈՒՄԸ



Սովորական են կանուխ, Շաբաթ 4 Յունիս 2011ին, Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ամառնային եղանակի «պաշտօնական» բացումը կատարուեցաւ: Երեկոյեան ժամը 9-էն սկսեալ անդամներ, համակիրներ, մարզիկներէն ոմանք, պատանիներ եւ փոքրիկներ սկսան տեղ գրաւել ակումբին պարտեզին մէջ ճերմակ ծածկոցներ հագած սեղաններուն շուրջ: DJ Արմէնի մատուցած եղանակները արդէն իսկ կը հնչէին: Մեծ պաստառի վրայ կը ցուցադրուէին Թաթուլ Ալթունեան պարահումբի ելոյթը եւ Արա Գեորգեանի իւրայատուկ մեղեդիները հայաշունչ մթնոլորտ մը կը ստեղծէին: Ակումբին երիտասարդ եւ աշխոյժ անդամուհի Տիկ. Սեւան Տրդատեան, բարձրախօսը ձեռքին, սկսաւ վարել երեկոն, իր յստակ ու մաքուր առոգանութեամբ հայերէնով: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին ու շնորհակալութիւն յայտնեց ակումբի տիկնանց յանձնախումբին եւ իրենց ժրաջան ատենապետուհի Տիկին Գոհար Առաքելեանին, իրենց պատրաստած ճոխ շքասեղանին համար ու հրաւիրեց բոլորը համտեսելու լիբանանեան-սուրիական եւ իտալական համեղ ուտելիքները: Ներկաներուն համար անակընկալ մը եղաւ Սեւանին կազմակերպած «խաղը»: Ան 5 զոյգեր ընտրեց. Տէր եւ Տիկին Ալպէռ եւ Մանուշ Չոփուրեան, Տէր եւ Տիկին Ստեփան եւ Զրիստին Վառվառեան, Տէր եւ Տիկին Կարէն եւ Շանթալ Թուլումպաճեան: Տիկինները քով-քովի նստան

ներկաներուն դիմաց, իսկ այր մարդիկը ներսի սրահը հրաւիրուեցան չլսելու համար տիկիններուն տրուած հարցումներուն պատասխանները: Տիկինները մի քանի անձնական, սակայն զուարճալի հարցումներու պատասխանելէ ետք, այր մարդիկը դուրս հրաւիրուեցան ու նոյն հարցումներուն պատասխանեցին ըստ իրենց տեսակետին կամ յիշողութեան: Մինչ Տիկին Մարլին Աւանեան զբաղած էր տրուած պատասխանները գրի առնելով ու զանոնք բաղդատելով, Սեւանը խնդրեց Տէր եւ Տիկին Չոփուրեաններէն որ ներկայացնեն իրենց շատ յաջող Rock and Rollը: Թեպէտ դանդաղ ու զգոյշ, սակայն պարահարթակներու անցեալի «զարդ» ամուլը պահած էր իր շնորհքն ու կշռոյթը: Հինգ զոյգերու արդիւնքները գրեթէ հաւասար ըլլալուն՝ որոշեցաւ մրցանակը Չոփուրեան զոյգին տալ առ ի գնահատանք իրենց գեղեցիկ ներկայացումին:

Ժամանակը եկած էր արեւելեան անուշեղենները համտեսելու: Կէս գիշերը անց տեղի ունեցաւ վիճակահանութիւնը եւ ակումբին ատենապետ Տոքթ. Կարօ Աբգարեան յանուն վարչութեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերած էին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 2011-ի ամառուայ առաջին ձեռնարկը:

Սօսի Ներեւտեան-Յակոբեան



**ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ
ՄՐՑԱՇԱՐՔԻՆ**

23 Մայիսին 29 Յունիս 2011ին Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ֆուտպոլի վեթերանները մասնակցեցան ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ կազմակերպած մրցաշարքին: Հելիոպոլիսին 12 ակումբներ 2 խմբաւորումներու բաժնուած մրցեցան իրարու դէմ, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց արդիւնքները շատ գոհացուցիչ չեղան: Անոնք խաղացին 5 մրցումներ, հաւասարեցան երկուքի մէջ ու կորսնցուցին երեքը: Չուտ «բարեկամական» որակելով այս հանդիպումները ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկները խաղացին որպէս «հաճելի ժամանց» ու չձգտեցան յաղթանակ արձանագրելու: Խումբի մարզիկներն էին. Ալէն Սագաեան, Արմէն Պալթաեան, Բօլ Նորարեւեան, Կարօ Վարժապետեան, Կարօ Գումրուեան, Կարէն Թուլումպաճեան, Ճորճ Սիմոնեան, Պերճ Աւետիսեան, Պերճ Սուլթանեան, Ռուբէն Սիմոնեան, Րիզօ Պօղոսեան և Զրիս Սիմոնեան: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ֆուտպոլի սիրահար երեք մարզիկներուն մասնակցիլը այս տեսակ մրցաշարքերու գնահատելի է, սակայն կը մաղթենք որ յաջորդ անգամ աւելի լաւ մարզուած ըլլան ու կարենան գոհացուցիչ արդիւնքներ արձանագրել:

Սօսի Ներեւտեան-Յակոբեան

**ԱՂԵ-ՔՍԱՆԳՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ
ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅՈՒՄԸ**

Եգիպտահայ ակումբներու աւանդութիւն դարձած «Ամառնային եղանակի բացում»ը կատարուեցաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն մէջ եւս 1 Յունիս 2011-ին: Ձեռնարկին բուն թուականը 24 Յունիս էր, սակայն ակումբին երկարամեայ և անձնուեր անդամուիի Արաքսի ՍԷՖԵՐԵԱՆ-ԴԱԼԻԹԵԱՆԻ դառնակակիծ մահուան պատճառով ան յետաձգուեցաւ մէկ շաբաթով: Ակումբը վերակենդանացած էր վերջերս կատարուած նորոգութիւններուն շնորհիւ: Պասքէթ պոլի դաշտը օժտուած էր 2 նոր տախտակներով (boards) ու դաշտին տարածութիւնը յարմարցուած խաղին նոր կանոններուն: Մարտ 2011-էն սկսած էր վերանորոգումը ետեւի ցանկապատին, որ մասամբ փլչելու ենթակայ էր կռնակի յարակից փողոցէն տարիներու ընթացքին ջուրի ընդմղումի հետեւանքով: Այս մեծածախս նորոգութիւններուն աջակցած է Գահիրեի ՀՄԸՄ-ի Սաթենիկ Զագըր Հիմնադրամը:

Տիկնանց յանձնախումբը պատրաստած էր ճոխ շքասեղան մը: Աւելի քան 100 աղեքսանդրաբնակ հայ գաղութի անդամներ եկած էին վայելելու հաճելի երեկոյ մը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ օդասուն մարզադաշտին մէջ: Վարձքը կատար բոլորին:

Սօսի Ներեւտեան-Յակոբեան

**2011Ի ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ**

13-21 Օգոստոս 2011-ին Երեւանի մէջ Համահայկական Ողիմպիական խաղերուն Եգիպտահայերը իրենց մասնակցութիւնը պիտի բերեն տղոց պասքէթպոլի խումբով: Այս տարի միայն Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ և ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ հետեւեալ մարզիկներէն կազմուած է հաւաքականը - Աբրահամ Թահթապուրունեան, Արամ Աբիկեան, Արի Երզնկացեան, Արմէն Վարժապետեան, Գեղամ Թերզիպաշեան, Թոնի Միշէլ, Էտուար Միշէլ, Խաչիկ Աւետանեան, Կարօ Վարժապետեան, Հրազդան Գալընեան, Յակոբ Մազլումեան, Նորայր Մխտիկեան և Վարուժան Գազանճեան: Խումբին մարզիչն է Ճորճ Թորոսեան, պատասխանատուն՝ Կարէն Թուլումպաճեան, իսկ պատուիրակութեան նախագահը՝ Պր. Նուպար Սիմոնեան:

Ճամբորդութեան ու կեցութեան լման ծախսերը պիտի հոգայ Գահիրեի Ազգային Իշխանութիւնը: Յաջողութիւն կը մաղթենք եգիպտահայ մարզիկներուն, որոնք 2009ի մրցաշարքին 16 խումբերու մէջ ճորճ դիրքը գրաւած էին:

Սօսի Ներեւտեան-Յակոբեան



**ՄԱՀ՝ ԱՂԵՔՍԱՆՆԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ
ՎՐԷԺ ՍԷՖԷՐԵԱՆԻ**

Ցաւով կը նշենք, թէ եգիպտահայ գաղութը տակաւ կը նօսրանայ, մանաւանդ իր ազգային հասարակական կառոյցներէն ներս երկար տարիներու վաստակ ունեցող անձնաւորութիւններու մահով:

Ուրբաթ, 4 Փետրուար 2011-ին իր մահկանացուն կնքեց Աղեքսանդրիոյ ազգային իշխանութեան նախկին անդամ եւ Զաղաքական Ժողովի նախկին փոխ-ատենապետ Վրէժ Սեֆերեան:

Ողբացեալը երկար տարիներու ղեկավարն էր «Ջահակիր»ի շրջանակին, անդամակցած էր Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ Մարգարանին, որուն վարչութեան մաս կազմած էր 70-ական թուականներէն:

Ան Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարգարանէն ներս իր ունեցած երկարամեայ գործունեութիւնը սկսած էր մաս կազմելով նախ սկաուտական շարժումին, ապա՝ մարգարանի վարչութեան, որուն ատենապետութիւնը վարած էր 1987-1994 տարիներուն:

Հանգուցեալը անդամ էր նաեւ Աղեքսանդրիոյ Տիգրան Երկաթ Մշակութային Միութեան:

Ողբացեալ Վրէժ Սեֆերեան եղաւ աղեքսանդրահայ այն դէմքերէն, որոնք աւելի քան կէս դար ծառայեցին իրենց գաղութի կազմակերպութիւններու գործունեութեան, այդպիսով նպաստելով հայութեան ու հայկականութեան պահպանումին գաղութէն ներս:

Թող հանգուցեալին ունեցած հայրենասիրական գործունեութիւնը օրինակ դառնայ յաջորդներուն:

«Տ»

**ՄԱՀ՝
ԱՂԵՔՍԱՆՆԻՐԻՈՅ ՀԱՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՍԻՒՆԵՐԷՆ
ԱՐԱՔՍԻ ԴԱԻԹԵԱՆ-ՍԷՖԷՐԵԱՆԻ**

Համակ եռանդ, համակ կրակ ու համակող աշխուժութիւն էր ան: Եւ այս երեքին երբ կը միացնենք անոր տածած մեծ սերը իր համայնքին նկատմամբ, եւ այդ սիրով շաղախւած գործունեութիւնը Աղեքսանդրիոյ ազգային իշխանութեան առընթեր գործող Բարեսիրաց Մարմնին մէջ եւ Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐ Մարգարանէն ներս, անվարան կրնանք ըսել, թէ ոչ միայն Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐը կորսնցուց իր կարելոր սիւներէն մին, այլ նաեւ աղեքսանդրահայութիւնը՝ աւելի քան 40 տարիներ իր ծառայասիրութեամբ ու ջանասիրութեամբ յայտնի հայուհի մը:

Ողբացեալ Արաքսի Դաւիթեան-Սեֆերեանի կարճատեւ հիւանդութեան աւարտը մահով Շաբաթ, 18 Յունիս 2011-ին, ցաւ էր ու կսկիծ: Որքան ալ համոզենք մենք զմեզ, թէ «Մահը մերն է, մենք մահինը, մարդուս գործն է միշտ անմահ», դարձեալ մարդ արարածին համար դժուար է վարժուիլ բացակայութեան, մանաւանդ բացակայութեանը ողբացեալին նման անձի մը, որ իր ներկայութեամբ կը լեցնէր մթնոլորտը:

Փորձենք համակերպիլ ու սիրով յիշել այս հայուհիին կատարած գործը:

«Տ»



ԱՆԴԱՄԱԿԱՆ

ԾՆՈՒՆԴ



Հինգշաբթի 5 Մայիս 2011ին, լոյս աշխարհ եկաւ ԶԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի անդամներէն, Տէր եւ Տիկին Կարպիս եւ Ժուլիա Ճոճոճեաններու երրորդ զաւակը՝ Արթուր:

Արթուրի ծննդեան առթիւ, կը շնորհաւորենք ծնողքը, մեծ ծնողները՝ Տէր եւ Տիկին Արթուր եւ Նուարդ Ճոճոճեանները եւ Տիկին Շէրի Լիոնիս, ինչպէս նաեւ մեծ մեծ մայրը՝ Տիկին Ժորժէթ Թրայեանը եւ նորածինին կը մաղթենք սիրով ու խաղաղութեամբ լեցուն առողջ կեանք:

Ն.Գ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



Խմբագրութիւնս մեծ ուրախութեամբ կ'արձանագրէ ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի օժանդակ անդամուհի Օր. Ռուբինա Ասլանեանի եւ Տիար Փիեռ Նորարեւեանի ամուսնութիւնը:

Երիտասարդ զոյգին Սուրբ Պսակի Խորհուրդը տեղի ունեցաւ Շաբաթ, 11 Յունիս 2011-ին, կնքահայրութեամբ Տէր եւ Տիկին Փոլ Նորարեւեանի:

Ջերմօրէն կը շնորհաւորենք նորապսակ զոյգը, իրենց ծնողները՝ Տէր եւ Տիկին Ճորճ Նորարեւեանը եւ Տէր եւ Տիկին Գալուստ Ասլանեանը, նաեւ մեծ ծնողներն ու հարազատները, մաղթելով որ անոնք ունենան սիրոյ, յարգանքի ու փոխհասկացողութեան հաստատուն հիմքեր ունեցող երջանիկ կեանք մը:

«Տ»

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Ուրբաթ, 4 Փետրուար 2011-ին իր մահկանացուն կնքեց ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ Աղեքսանդրիոյ մասնաճիւղի երկարամեայ անդամ Վրէժ ՍԷՖերեան:

Մեր խոր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին հարազատներուն եւ գործակիցներուն:

«Տ»

Խոր կսկիծով կը նշենք թէ Շաբաթ, 18 Յունիս 2011-ին շիջեցաւ կեանքը Աղեքսանդրիոյ ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ կարկառուն դեմքերէն՝ Արաքսի Դաւիթեան-ՍԷՖերեանի:

Մեր անկեղծ ցաւակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին զաւակներուն՝ Տէր եւ Տիկին Զամբար Դաւիթեանի, Տէր եւ Տիկին Տիգրան Դաւիթեանի, հարազատներուն եւ ԶՍԸՄ ՆՈՒՊԱՐԻ մեծ ընտանիքի անդամներուն:

«Տ»

